

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ

Հոդված 1

ՆՊԱՏԱԿԸ

Սույն Կոնվենցիայի նպատակն անդրազգային կազմակերպված հանցավորության առավել արդյունավետ կանխարգելմանը և դրա դեմ պայքարի գործում համագործակցությանն աջակցելն է:

Հոդված 2

Տերմինները

Սույն Կոնվենցիայի նպատակների համար՝

ա) «կազմակերպված հանցավոր խումբ» նշանակում է՝ երեք և ավելի անձանցից կազմված կառուցվածքայնորեն ձևավորված խումբ, որը գոյություն ունի որոշակի ժամանակահատվածում և համաձայնեցված գործում է մեկ կամ մի քանի լուրջ հանցագործություններ կամ այնպիսի հանցագործություններ կատարելու նպատակով, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան՝ այն հաշվով, որ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստանա ֆինանսական կամ այլ նյութական շահ.

բ) «լուրջ հանցագործություն» նշանակում է՝ այն հանցագործությունը, որը պատժվում է չորս տարուց ոչ պակաս ազատազրկմամբ ժամկետով կամ ավելի խիստ պատժաչափով.

գ) «կառուցվածքայնորեն ձևավորված խումբ» նշանակում է՝ այն խումբը, որը պատահականորեն չի կազմավորվել հանցագործության անհապաղ կատարման համար, և որում ոչ պարտադիր կերպով ձևականորեն որոշված են նրա անդամների դերերը, վերապահված է անդամակցության անընդհատ բնույթը կամ ստեղծված է զարգացած կառուցվածք.

դ) «գույք» նշանակում է՝ ցանկացած ակտիվները, լինի դրանք նյութական կամ ոչ նյութական, շարժական կամ անշարժ, որոնք արտահայտված են իրերում կամ իրավունքներում, ինչպես նաև իրավաբանական փաստաթղթերը կամ ակտերը, որոնք հաստատում են այդպիսի ակտիվների նկատմամբ իրավունքը կամ շահագրգռվածությունը դրանցում.

ե) «հանցագործությունից ստացված եկամուտներ» նշանակում է՝ ցանկացած գույքը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ձեռք է բերվել կամ ստացվել է որևէ հանցագործության կատարման հետևանքով.

զ) «կալանք» կամ «առգրավում» նշանակում է՝ դատարանի կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ գույքի փոխանցումը, վերափոխումը, օտարումը կամ տեղաշարժը կամ այդպիսի գույքի ժամանակավոր տիրապետմանը անցնելը կամ դրա նկատմամբ ժամանակավոր վերահսկողության իրականացման ժամանակավոր արգելումը.

է) «բռնագրավում» նշանակում է՝ գույքից վերջնականորեն զրկումը դատարանի կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ.

ը) «հիմնական իրավախախտում» նշանակում է՝ ցանկացած իրավախախտում, որի հետևանքով ստացվել են եկամուտներ, որոնց նկատմամբ կարող են կատարվել սույն Կոնվենցիայի 6-րդ հոդվածում նշված արարքները, որոնք հանցակազմ են ձևավորում.

թ) «վերահսկելի մատակարարում» նշանակում է՝ մեթոդ, որի պայմաններում թույլատրվում է մեկ կամ մի քանի պետությունների տարածք արտահանել, անցկացնել կամ ներմուծել անօրինական կամ կասկած հարուցող բեռի խմբաքանակ նրանց իրավասու մարմինների գիտությամբ և հսկողության ներքո՝ որևէ հանցագործության քննության և այդ հանցագործության կատարմանը մասնակցող անձանց հայտնաբերման նպատակով.

ժ) «տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպություն» նշանակում է՝ այն կազմակերպությունը, որը ստեղծվել է որևէ տարածաշրջանի ինքնիշխան պետությունների կողմից, որին նրա անդամ պետությունները իրավասություններ են տվել սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերով, և որը, իր ներքին ընթացակարգերին համապատասխան, պատշաճորեն լիազորված է ստորագրել, վավերացնել, ընդունել, հաստատել սույն Կոնվենցիան կամ միանալ դրան. սույն Կոնվենցիայում «Մասնակից պետություններին» արված հղումներն այդպիսի կազմակերպություններին վերաբերում են նրանց իրավասության սահմաններում:

Հոդված 3

Կիրառման ոլորտը

1. Սույն Կոնվենցիան, եթե նրանում այլ բան նշված չէ, կիրառվում է կանխարգելման, քննության և քրեական հետապնդման նկատմամբ կապված.

ա) այն հանցագործությունների հետ, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 23-րդ հոդվածներին համապատասխան, և

բ) լուրջ հանցագործությունների հետ, ինչպես դրանք սահմանված են սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածում, եթե այդ հանցագործությունները կրում են անդրազգային բնույթ և կատարվել են կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ:

2. Սույն հոդվածի 1-ին կետի նպատակի համար հանցագործությունը անդրազգային բնույթ է կրում, եթե.

ա) այն կատարվել է մեկից ավելի պետություններում.

բ) այն կատարվել է մի պետությունում, բայց դրա նախապատրաստման, պլանավորման, ղեկավարման կամ վերահսկողության էական մասը տեղի է ունեցել այլ պետությունում.

գ) այն կատարվել է մի պետությունում, բայց այնպիսի կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ, որը հանցավոր գործունեություն է իրականացնում մեկից ավելի պետություններում, կամ

դ) այն կատարվել է մի պետությունում, բայց դրա էական հետևանքները եղել են այլ պետությունում:

Հոդված 4

Ինքնիշխանության պաշտպանությունը

1. Մասնակից պետությունները, սույն Կոնվենցիայի համաձայն, իրենց պարտավորությունները իրականացնում են պետությունների ինքնիշխան հավասարության և տարածքային ամբողջականության սկզբունքների և այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքին համապատասխան:

2. Սույն Կոնվենցիայում ոչինչ Մասնակից պետությանը չի օժտում մյուս պետության տարածքում այնպիսի իրավասություն և գործառույթներ իրականացնելու իրավունքով, որոնք մտնում են բացառապես այդ մյուս պետության մարմինների իրավասության մեջ՝ նրա ներքին օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 5

Կազմակերպված հանցավոր խմբում մասնակցության քրեականացումը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել՝ այն հաշվով, որ քրեորեն պատժելի համարվեն հետևյալ արարքները, երբ դրանք կատարվում են դիտավորությամբ.

(ա) հետևյալ գործողություններից երկուսը կամ մեկը՝ դրանք չկապելով հանցագործության կատարման փորձին՝ անկախ հանցավոր արարքի փաստացի կատարումից.

(i) լուրջ հանցագործություն կատարելու վերաբերյալ մեկ կամ մի քանի անձանց հետ համաձայնությունը, որը հետապնդում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսական կամ այլ նյութական շահ ստանալու հետ կապված նպատակ, ընդ որում, եթե դա նախատեսված է ներքին օրենսդրությամբ, ինչպես նաև ենթադրվում է համաձայնության մասնակիցներից մեկի՝ այդ համաձայնության իրականացման համար որևէ գործողության փաստացի կատարումը կամ կազմակերպված հանցավոր խմբի առնչությունը.

(ii) որևէ անձի արարքները, որը, կազմակերպված հանցավոր խմբի նպատակները և ընդհանուր հանցավոր գործունեությունը կամ համապատասխան հանցագործություններ կատարելու նրա մտադրությունները գիտակցելով, գործուն մասնակցություն է ունենում.

ա) կազմակերպված հանցավոր խմբի հանցավոր գործունեությանը.

բ) կազմակերպված հանցավոր խմբի այլ տեսակների գործունեությանը՝ այն բանի գիտակցումով, որ նրա մասնակցությունը կնպաստի վերը նշված հանցավոր նպատակին հասնելուն.

(բ) կազմակերպելը, ղեկավարելը, օժանդակելը, դրդելը, աջակցելը կամ կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ կատարված լուրջ հանցագործության վերաբերյալ խորհուրդներ տալը:

2. Գիտակցելը, մտադրությունը, դիտավորությունը, նպատակը կամ համաձայնությունը, որոնց մասին խոսվում է սույն հոդվածի 1-ին կետում, կարող են հաստատվել գործի օբյեկտիվ փաստացի հանգամանքներով:

3. Մասնակից պետությունները, որոնց ներքին օրենսդրությունը որպես հանցակազմի տարրեր, որոնք այդպիսին են ճանաչվել սույն հոդվածի 1-ին (ա) (i) կետի համապատասխան, նախատեսում է կազմակերպված հանցավոր խմբի առնչությունը, ապահովում են, որ իրենց ներքին օրենսդրությունը լուրջ հանցագործությունների թվին դասի կազմակերպված հանցավոր խմբերի մասնակցությամբ կատարվող բոլոր հանցագործությունները: Այդպիսի Մասնակից պետությունները, ինչպես նաև այն Մասնակից պետությունները, որոնց ներքին օրենսդրությունը որպես հանցակազմի տարրեր, որոնք այդպիսին են ճանաչվել սույն հոդվածի 1-ին (ա) (i) կետի համապատասխան, նախատեսում է հանցավոր համաձայնության իրականացման գործողության փաստացի կատարում, այդ մասին հայտնում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին սույն Կոնվենցիան նրանց կողմից ստորագրվելիս կամ վավերագիրը կամ ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնվելիս:

Հոդված 6

Հանցագործություններից ստացվող եկամուտների լվացման քրեականացումը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել՝ այն հաշվով, որ քրեորեն պատժելի ճանաչվեն հետևյալ արարքները, եթե դրանք կատարվում են դիտավորությամբ.

(ա) (i) փոխարկումը կամ գույքը փոխանցելը, եթե հայտնի է, որ այդպիսի գույքը իրենից ներկայացնում է հանցագործություններից ստացված եկամուտներ, այդ գույքի հանցավոր աղբյուրը քողարկելու կամ թաքցնելու կամ հիմնական իրավախախտման

կատարմանը մասնակցող ցանկացած անձին օգնություն ցույց տալու նպատակով՝ այն հաշվով, որ նա կարողանա խուսափել իր արարքների համար պատասխանատվությունից.

(ii) իրական բնույթը, աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման միջոցը, տեղաշարժը կամ գույքի նկատմամբ իրավունքները կամ դրա պատկանելիությունը քողարկելը կամ թաքցնելը, եթե հայտնի է, որ այդպիսի գույքը իրենից ներկայացնում է հանցագործություններից ստացված եկամուտներ.

(բ) իր իրավական համակարգի հիմնական սկզբունքները պահպանելու պայմանով.

(i) գույք ձեռք բերելը, տիրապետելը կամ օգտագործելը, եթե այն ստանալու պահին հայտնի է, որ այդպիսի գույքը իրենից ներկայացնում է հանցագործությունից ստացված եկամուտներ.

(ii) մասնակցությունը, առնչությունը կամ այնպիսի հանցագործության կատարման նպատակով համաձայնության գալը, որոնք այդպիսին են ճանաչված սույն հոդվածին համապատասխան, դրա կատարման փորձը, ինչպես նաև օժանդակելը, դրդելը, աջակցելը կամ դրա կատարման ժամանակ խորհուրդներ տալը:

2. Սույն հոդվածի 1-ին կետի իրականացման կամ կիրառման նպատակով՝

(ա) յուրաքանչյուր Մասնակից պետություն ձգտում է սույն հոդվածի 1-ին կետը կիրառել հիմնական իրավախախտումների առավել լայն շրջանակի նկատմամբ.

(բ) յուրաքանչյուր Մասնակից պետություն հիմնական իրավախախտումների թվին է դասում բոլոր լուրջ հանցագործությունները, ինչպես դրանք սահմանված են սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածում, ինչպես նաև այն հանցագործությունները, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիայի 5-րդ, 8-րդ և 23-րդ հոդվածներով: Այն դեպքում, երբ Մասնակից պետությունների օրենսդրությունը պարունակում է որոշակի հիմնական իրավախախտումների ցանկ, դրանում, իբրև նվազագույն, ընդգրկվում է այն հանցագործությունների համընդգրկուն շրջանակը, որոնք կապված են կազմակերպված հանցավոր խմբերի գործունեության հետ.

(գ) (բ) ենթակետի նպատակների համար հիմնական իրավախախտումները ներառում են այն հանցագործությունները, որոնք կատարվում են ինչպես համապատասխան Մասնակից պետության իրավասության սահմաններում, այնպես էլ դրանից դուրս: Սակայն որևէ Մասնակից պետության իրավասության սահմաններից դուրս կատարված հանցագործություններն իրենցից հիմնական իրավախախտումներ են ներկայացնում միայն այն պայմանով, որ համապատասխան արարքը քրեորեն պատժելի է համարվում այն պետության ներքին օրենսդրությանը համաձայն, որտեղ դա կատարվել է, և քրեորեն պատժելի կլիներ այն Մասնակից պետության ներքին օրենսդրությանը համաձայն, որտեղ իրականացվում կամ կիրառվում է սույն հոդվածը, եթե այն կատարված լիներ այդտեղ.

(դ) յուրաքանչյուր Մասնակից պետություն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին է ներկայացնում սույն հոդվածի դրույթների իրականացումն ապահովող իր օրենքների տեքստերը, ինչպես նաև այդպիսի օրենքների հետագա ցանկացած փոփոխությունների տեքստերը կամ դրանց նկարագրությունը:

(ե) եթե դա են պահանջում Մասնակից պետության ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքները, ապա կարելի է նախատեսել, որ սույն հոդվածի 1-ին կետում նշված հանցագործությունները չեն վերաբերում հիմնական իրավախախտումը կատարած անձանց:

(զ) գիտակցելը, դիտավորությունը կամ նպատակը որպես սույն հոդվածի 1-ին կետում նշված հանցագործության հանցակազմի տարրեր կարող են հաստատվել գործի օբյեկտիվ փաստացի հանգամանքներով:

Հոդված 7

Դրամական միջոցների լվացման դեմ պայքարի միջոցները

1.Յուրաքանչյուր Մասնակից պետություն՝

(ա) բանկերի և ոչ բանկային ֆինանսական հաստատությունների, իսկ անհրաժեշտության դեպքերում՝ նաև այլ՝ դրամական միջոցների լվացման տեսակետից հատկապես խոցելի համարվող մարմինների նկատմամբ իր իրավասության սահմաններում սահմանում է կարգավորման և վերահսկողության համընդգրկուն ներքին ռեժիմ՝ դրամական միջոցների լվացման բոլոր ձևերի կանխարգելման և բացահայտման նպատակով, ընդ որում այդպիսի ռեժիմը հիմնվում է հաճախորդի անձի նույնացման, հաշվետվություններ վարելու և կասկածելի գործարքների մասին տեղեկություն տրամադրելու պահանջների վրա:

(բ) առանց սույն Կոնվենցիայի 18-րդ և 27-րդ հոդվածները վնասելու՝ ապահովում է, որ դրամական միջոցների լվացման դեմ պայքար մղող վարչական, կարգավորիչ, իրավապահ և այլ մարմինները (այդ թվում, եթե դա համապատասխանում է ներքին օրենսդրությանը, նաև դատական մարմինները) ընդունակ լինեն իրականացնելու համագործակցություն և տեղեկության փոխանակում ազգային և միջազգային մակարդակով՝ նրա ներքին օրենսդրությամբ սահմանվող պայմաններով, և այդ նպատակով, ուսումնասիրում է օպերատիվ ֆինանսական տեղեկատվության ստորաբաժանման ստեղծման վերաբերյալ հարցը, որը պետք է գործի որպես դրամական միջոցների լվացման հնարավոր դեպքերին վերաբերվող տեղեկության հավաքման, վերլուծության և տարածման ազգային կենտրոն:

2. Մասնակից պետությունները քննարկում են իրենց սահմաններով կանխիկ դրամական միջոցների և համապատասխան շրջանառու գործիքների տեղափոխման հայտնաբերման հնարավոր միջոցների գործնական կիրառման և այդպիսի տեղափոխման վերահսկողության հարցը՝ տեղեկության պատշաճ օգտագործման ապահովմանն ուղղված երաշխիքների պահպանման պայմանով, և որևէ խոչընդոտ չստեղծելով օրինական կապիտալի տեղափոխման համար: Այդպիսի միջոցները

կարող են ներառել պահանջ այն մասին, որպեսզի ֆիզիկական անձինք և առևտրային կազմակերպությունները հայտնեն կանխիկ միջոցների մեծ ծավալների անդրասահմանային փոխանցումների և համապատասխան շրջանառու գործիքների փոխանցման մասին:

3. Սույն հոդվածի դրույթների համաձայն և առանց սույն Կոնվենցիայի ցանկացած այլ հոդվածի դրույթները վնասելու կարգավորման և վերահսկողության ներքին ռեժիմ հաստատելիս Մասնակից պետություններին առաջարկվում է ղեկավարվել տարածաշրջանային, միջտարածաշրջանային և բազմակողմ կազմակերպությունների համապատասխան նախաձեռնություններով, որոնք ուղղված են դրամական միջոցների լվացման դեմ:

4. Մասնակից պետությունները ձգտում են համերկրային, տարածաշրջանային, ենթատարածաշրջանային և երկկողմ համագործակցության զարգացմանն ու խրախուսմանը դատական և իրավապահ մարմինների, ինչպես նաև ֆինանսական կարգավորման մարմինների միջև՝ դրամական միջոցների լվացման դեմ պայքարելու նպատակով:

Հոդված 8

Կաշառակերության քրեականացումը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել՝ այն հաշվով, որպեսզի իբրև քրեորեն պատժելի ճանաչվեն հետևյալ արարքները, եթե դրանք կատարվում են դիտավորությամբ.

(ա) հանրային պաշտոնատար անձին անձամբ կամ միջնորդների միջոցով որևէ անիրավաչափ նախապատվություն խոստանալը, առաջարկելը կամ տրամադրելը հենց պաշտոնատար անձի կամ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար՝ այն հաշվով, որ այդ պաշտոնատար անձն իրականացնի որևէ գործողություն կամ անգործություն իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս.

(բ) հանրային պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդների միջոցով որևէ անիրավաչափ նախապատվություն շորթելը կամ ընդունելը հենց պաշտոնատար անձի կամ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար՝ այն հաշվով, որ այդ պաշտոնատար անձը իրականացնի որևէ գործողություն կամ անգործություն իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ուսումնասիրում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ ընդունելու հնարավորությունը, ինչպիսիք կարող են պահանջվել՝ այն հաշվով, որ քրեորեն պատժելի ճանաչվեն այն արարքները, որոնք նշված են սույն հոդվածի 1-ին կետում, երբ դրանցում մասնակցում է որևէ օտարերկրյա հանրային պաշտոնատար անձ կամ միջազգային քաղաքացիական ծառայող: Յուրաքանչյուր Մասնակից պետություն քննարկում է նաև կաշառակերության այլ ձևերը քրեորեն պատժելի ճանաչելու հնարավորությունը:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է նաև այնպիսի միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել՝ այն հաշվով, որ քրեորեն պատժելի ճանաչվեն որևէ այնպիսի հանցագործության կատարմանը որպես հանցակից մասնակցելը, որն այդպիսին է ճանաչվել սույն հոդվածին համապատասխան:

4. Սույն հոդվածի 1-ին կետի և սույն Կոնվենցիայի 9-րդ հոդվածի նպատակների համար հանրային պաշտոնատար անձ՝ է հանդիսանում հանրային պաշտոնատար անձը կամ այն անձը, որը տրամադրում է որևէ հանրային ծառայություն, ինչպես դա սահմանվում է Մասնակից պետության ներքին օրենսդրությամբ, և ինչպես դա կիրառվում է այդ Մասնակից պետության ներքին օրենսդրությամբ, որտեղ տվյալ անձը այդպիսի գործառույթներ է իրականացնում, և ինչպես դա կիրառվում է այդ Մասնակից պետության քրեական օրենսդրության մեջ:

Հոդված 9

Կաշառակերության դեմ միջոցները

1. Ի լրումն սույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածում շարադրված միջոցների՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն, այն չափով, որքանով դա պահանջվում է և համապատասխանում է նրա իրավական համակարգին, ընդունում է օրենսդրական, վարչական և այլ արդյունավետ միջոցներ բարեպաշտությանն աջակցելու համար, ինչպես նաև հանրային պաշտոնատար անձանց շրջանում կաշառակերության կանխարգելման և բացահայտման ու դրա պատճառով պատժելու համար:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն միջոցներ է ձեռնարկում հանրային պաշտոնատար անձանց շրջանում կաշառակերության կանխարգելման ու բացահայտման և դրա համար պատժի բնագավառներում իր մարմինների արդյունավետ գործողությունների ապահովման համար, այդ թվում՝ իրենց գործողությունների նկատմամբ անիրավաչափ ազդեցությանը խոչընդոտելու համար՝ այդպիսի մարմիններին բավարար անկախություն տալու միջոցով:

Հոդված 10

Իրավաբանական անձանց պատասխանատվությունը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ձեռնարկում է այնպիսի միջոցներ, ինչպիսիք, հաշվի առնելով իր իրավական սկզբունքները, կարող են պահանջվել այնպիսի լուրջ հանցագործությունների կատարմանը մասնակցելու համար իրավաբանական անձանց պատասխանատվություն սահմանելու համար, որոնց հետ առնչություն ունի կազմակերպված հանցավոր խումբը, և այն հանցագործությունների համար, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 23-րդ հոդվածներին համապատասխան:

2. Մասնակից պետության իրավական սկզբունքների պահպանման պայմանով՝ իրավաբանական անձանց պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիաիրավական կամ վարչական:

3. Այդպիսի պատասխանատվություն դնելը չի վնասում հանցագործություն կատարած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությանը:

4. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, մասնավորապես, սույն հոդվածի համապատասխան պատասխանատվության ենթարկվող իրավաբանական անձանց նկատմամբ ապահովում է արդյունավետ, համաչափ և կանխարգելիչ ազդեցություն ունեցող քրեական կամ ոչ քրեական սանկցիաների կիրառումը, ներառյալ դրամական սանկցիաները:

Հոդված 11

Հետապնդումը, դատական որոշումը և սանկցիաներ կայացնելը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն որևէ հանցագործության կատարման համար, որն այդպիսին է ճանաչվել սույն Կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 23-րդ հոդվածներին համապատասխան, նախատեսում է այնպիսի սանկցիաների կիրառում, որոնք հաշվի են առնում այդ հանցագործության վտանգավորության աստիճանը:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ձգտում է ապահովել իր ներքին օրենսդրությամբ նախատեսված ցանկացած ինքնիշխան իրավաբանական լիազորությունների օգտագործումը, որոնք վերաբերում են այն հանցագործությունների համար անձանց քրեական հետապնդմանը, որոնք ընդգրկված են սույն Կոնվենցիայով՝ այդ հանցագործությունների նկատմամբ իրավապահ միջոցների առավելագույն արդյունավետության հասնելու համար, և պատշաճորեն հաշվի առնելով այդպիսի հանցագործությունների կատարմանը խոչընդոտելու անհրաժեշտությունը:

3. Այն հանցագործությունների նկատմամբ, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 23-րդ հոդվածներին համապատասխան, յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրությանը համապատասխան և պատշաճորեն հաշվի առնելով պաշտպանության իրավունքները, պատշաճ միջոցներ է ձեռնարկում այն բանի ապահովման նպատակով, որպեսզի պայմանները, որոնք սահմանվում են մինչև դատը ազատելու վերաբերյալ որոշումների կամ մինչև վճռաբեկ գանգատով կամ բողոքով որոշում ընդունելը, հաշվի առնեն հետագա քրեական դատավարության ընթացքում մեղադրյալի ներկայության ապահովման անհրաժեշտությունը:

4. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ապահովում է, որ իր դատարանները կամ այլ իրավասու մարմինները հաշվի առնեն սույն Կոնվենցիայով ընդգրկված հանցագործությունների վտանգավոր բնույթը այդպիսի հանցագործությունների համար դատապարտված անձանց վաղակետ կամ պայմանական ազատման հնարավորության հարցը քննելիս:

5. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, անհրաժեշտության դեպքում, իր ներքին օրենսդրությանը համաձայն, ցանկացած հանցագործության համար, որն ընդգրկված

է սույն Կոնվենցիայով, սահմանում է քրեական հետապնդում հարուցելու վաղեմության երկար ժամկետ և վաղեմության ավելի երկար ժամկետ այն դեպքերում, երբ անձը, որը կասկածվում է հանցագործության կատարման մեջ, խուսափում է արդարադատությունից:

6. Այն ամենը, ինչ բովանդակում է սույն Կոնվենցիան, չի շոշափում այն սկզբունքը, որի համաձայն այն հանցագործությունները որոշելը, որոնք այդպիսին են ճանաչված սույն Կոնվենցիային համապատասխան, և կիրառվող իրավաբանական առարկությունները կամ այլ իրավական սկզբունքները, որոնք սահմանում են արարքի իրավաչափությունը, մտնում են յուրաքանչյուր Մասնակից պետության ներքին օրենսդրության ոլորտի մեջ, իսկ այդպիսի հանցագործությունների համար քրեական հետապնդումը և պատիժը իրականացվում են այդ օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 12

Բռնագրավումը և կալանքը

1. Մասնակից պետությունները իրենց ներքին իրավական համակարգի հնարավորությունների շրջանակներում առավելագույն չափով ձեռնարկում են այնպիսի միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել ապահովելու համար բռնագրավման հնարավորությունը.

(ա) սույն Կոնվենցիայով ընդգրկված հանցագործություններից ստացված եկամուտների կամ այն գույքի, որի արժեքը համապատասխանում է այդպիսի եկամուտների արժեքին.

(բ) սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործությունների կատարման ժամանակ օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գույքի, սարքավորումների կամ այլ միջոցների:

2. Մասնակից պետությունները ձեռնարկում են այնպիսի միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել սույն հոդվածի 1-ին կետում թվարկվածից ցանկացածի բացահայտման, հետախուզման, կալանքի կամ առգրավման հնարավորության ապահովման համար՝ հետագա բռնագրավման նպատակով:

3. Եթե հանցագործություններից ստացված եկամուտները մասամբ կամ ամբողջությամբ վերածվել կամ վերափոխվել են այլ գույքի, ապա սույն հոդվածում նշված միջոցները կիրառվում են նաև այդպիսի գույքի նկատմամբ:

4. Եթե հանցագործություններից ստացված եկամուտները միացվել են օրինական աղբյուրներից ձեռք բերված գույքին, ապա, առանց կալանքի կամ առգրավման վերաբերյալ ցանկացած լիազորություն վնասելու, բռնագրավման ենթակա է գույքի այն մասը, որը համապատասխանում է հանցագործությունից ստացված միացված եկամուտների գնահատման արժեքին:

5. Շահույթի կամ այլ օգուտների նկատմամբ, որոնք ստացվել են հանցագործություններից ձեռք բերված եկամուտներից՝ այնպիսի գույքից, որին վերաձվել կամ վերափոխվել են հանցագործություններից ստացված եկամուտները, կամ այնպիսի գույքից, որին միացվել են հանցագործություններից ստացված եկամուտները, նույնպես կիրառվում են սույն հոդվածում նշված միջոցները՝ նույն ձևով և նույն չափով, ինչ որ հանցագործություններից ստացված եկամուտների նկատմամբ:

6. Սույն հոդվածի և սույն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի նպատակների համար Մասնակից պետությունն իր դատարաններին և այլ իրավասու մարմիններին լիազորում է ընդունել բանկային, ֆինանսական կամ առևտրային փաստաթղթեր տրամադրելու կամ արգելանք դնելու վերաբերյալ որոշումներ: Մասնակից պետությունները չեն հրաժարվում սույն կետի համապատասխան միջոցներ ձեռնարկելուց՝ վկայակոչելով բանկային գաղտնիքի պահպանության անհրաժեշտությունը:

7. Մասնակից պետությունները կարող են քննարկել այն մասին պահանջը պարզելու հնարավորությունը, որ անձը, որը հանցագործություն է կատարել, ապացուցի հանցագործությունից ստացված ենթադրյալ եկամուտների կամ բռնագրավման ենթակա այլ գույքի օրինական ծագումը՝ այն չափով, որքանով այդպիսի պահանջը համապատասխանում է իրենց ներքին օրենսդրության սկզբունքներին և դատական կամ այլ քննության բնույթին:

8. Սույն հոդվածի դրույթները չեն մեկնաբանվում որպես բարեխիղճ երրորդ կողմերի իրավունքներին վնասող:

9. Այն ամենը, ինչ բովանդակում է սույն հոդվածը, չի շոշափում այն սկզբունքը, որի համաձայն այն միջոցները, որոնց մասին դրանում խոսվում է, որոշվում և իրականացվում են Մասնակից պետության ներքին օրենսդրության դրույթներին համապատասխան և դրանց պահպանման պայմանով:

Հոդված 13

Բռնագրավման նպատակով միջազգային համագործակցությունը

1. Մասնակից պետությունը, որը մյուս Մասնակից պետությունից, որի իրավասության ներքո է գտնվում սույն Կոնվենցիայով ընդգրկված որևէ հանցագործություն, խնդրանք է ստացել սույն Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված հանցագործություններից ստացված եկամուտների, գույքի, սարքավորումների կամ հանցագործության կատարման այլ միջոցների բռնագրավման մասին, որոնք գտնվում են նրա տարածքում, առավելագույն չափով, որքանով հնարավոր է իր ներքին իրավական համակարգի շրջանակներում՝

(ա) այդ խնդրանքն ուղարկում է իր իրավասու մարմիններին բռնագրավման վերաբերյալ որոշում ստանալու նպատակով և այդպիսի որոշում ընդունելու դեպքում ի կատար է ածում այն, կամ

(բ) իր իրավասու մարմիններին է ուղարկում բռնագրավման մասին որոշումը, որը դատարանի կողմից սույն Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, ընդունվել է հայցող Մասնակից պետության տարածքում՝ այն ծավալով կատարելու նպատակով, որը նշված է խնդրանքում, և այն չափով, որքանով այն վերաբերում է հայցվող Մասնակից պետության տարածքում գտնվող հանցագործություններից ստացված եկամուտներին, գույքին, սարքավորմանը կամ հանցագործությունների կատարման այլ միջոցներին, որոնք նշված են 12-րդ հոդվածի 1-ին կետում:

2. Սյուս Մասնակից պետության կողմից ուղարկված խնդրանքը ստանալուն պես, որի իրավասության տակ է գտնվում սույն Կոնվենցիայով ընդգրկված որևէ հանցագործություն, հայցվող Մասնակից պետությունը միջոցներ է ձեռնարկում սույն Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին կետում նշված հանցագործություններից ստացված եկամուտների, գույքի, սարքավորման կամ հանցագործության կատարման այլ միջոցների բացահայտման, հետախուզման, կալանքի կամ առգրավման համար՝ հետագա բռնագրավման նպատակով, որի մասին որոշումն ընդունվում է կամ հայցող Մասնակից պետության կամ սույն հոդվածի 1-ին կետի համաձայն արված խնդրանքին համապատասխան, հայցվող Մասնակից պետության կողմից:

3. Սույն Կոնվենցիայի 18-րդ հոդվածի դրույթները *mutatis mutandis* (պարտադիր) կիրառվում են սույն հոդվածի նկատմամբ: Ի լրումն 18-րդ հոդվածի 15-րդ կետում նշված տեղեկության՝ սույն հոդվածի հիման վրա ուղարկված խնդրանքներում պարունակվում է.

(ա) սույն հոդվածի 1՝ ա՝ կետով նախատեսված խնդրանքի նկատմամբ՝ բռնագրավման ենթակա գույքի նկարագրությունը և դիմում այն փաստերի շարադրմամբ, որոնք վկայակոչում է հայցող Մասնակից պետությունը, և որոնք բավարար են այն բանի համար, որ հայցվող Մասնակից պետությունը կարողանա միջոցներ ձեռնարկել իր ներքին օրենսդրությանը համաձայն որոշումը կատարելու համար.

(բ) սույն հոդվածի 1՝ բ՝ կետով նախատեսված խնդրանքի նկատմամբ՝ հայցող Մասնակից պետության կողմից ընդունված բռնագրավման մասին որոշման իրավաբանորեն թույլատրելի պատճենը, որի վրա հիմնվում է խնդրանքը, դիմում՝ հայցվող որոշման կատարման ծավալի վերաբերյալ փաստերի և տեղեկության շարադրմամբ.

(գ) սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված խնդրանքի նկատմամբ՝ դիմում՝ այն փաստերի շարադրմամբ, որոնք վկայակոչում է հայցող Մասնակից պետությունը, և հայցվող միջոցների նկարագրությունը:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նախատեսված որոշումները կամ միջոցները հայցվող Մասնակից պետության կողմից ընդունվում են նրա ներքին օրենսդրության դրույթներին և նրա դատավարական նորմերին կամ ցանկացած երկկողմ կամ բազմակողմ պայմանագրերին, համաձայնագրերին կամ պայմանավորվածություններին համապատասխան, որոնցով նա կարող է կապված

լինել հայցող Մասնակից պետության հետ հարաբերություններում և դրանք պահպանելու պայմանով:

5. Յուրաքանչյուր Մասնակից պետություն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ներկայացնում է սույն հոդվածի դրույթների իրականացումն ապահովող իր օրենքների և կանոնների տեքստերը, ինչպես նաև այդպիսի օրենքների և կանոնների ցանկացած հետագա փոփոխությունների տեքստերը կամ դրանց նկարագրությունը:

6. Եթե որևէ Մասնակից պետություն ցանկանա սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված միջոցների կատարումը պայմանավորել համապատասխան պայմանագրի առկայությամբ, ապա այդ Մասնակից պետությունը սույն Կոնվենցիան դիտում է որպես անհրաժեշտ և բավարար իրավապայմանագրային հիմք:

7. Մասնակից պետություններին կարող է մերժվել սույն հոդվածի համաձայն համագործակցությունը, եթե հանցագործությունը, որին վերաբերում է խնդրանքը, չի համարվում սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործություն:

8. Սույն հոդվածի դրույթները չեն մեկնաբանվում որպես բարեխիղճ երրորդ կողմերին վնասող:

9. Սույն հոդվածի համաձայն իրականացվող միջազգային համագործակցության արդյունավետության բարձրացման համար Մասնակից պետությունները քննարկում են երկկողմ կամ բազմակողմ պայմանագրեր, համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ կնքելու հնարավորությունը:

Հոդված 14

Հանցագործությունից ստացված բռնագրավված եկամուտների կամ գույքի տնօրինումը

1. Հանցագործություններից ստացված եկամուտները կամ գույքը, որոնք Մասնակից պետության կողմից բռնագրավվել են սույն Կոնվենցիայի 12-րդ կամ 13-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա, տնօրինում է այդ Մասնակից պետությունը՝ իր ներքին օրենսդրությանը և վարչական ընթացակարգերին համապատասխան:

2. Գործերով մյուս Մասնակից պետության կողմից սույն Կոնվենցիայի 13-րդ հոդվածին համապատասխան ուղարկված խնդրանքով, Մասնակից պետությունները, այն չափով, որքանով դա թույլատրվում է ներքին օրենսդրությամբ և համապատասխան հարցում ստանալու դեպքում, առաջնահերթության կարգով քննում են հանցագործություններից ստացված բռնագրավված եկամուտները կամ գույքը հայցող Մասնակից պետությանը վերադարձնելու հարցը՝ այն հաշվով, որ նա կարողանա փոխհատուցում տրամադրել հանցագործությունից տուժածներին կամ հանցագործություններից ստացված այդպիսի եկամուտները կամ գույքը վերադարձնի դրանց օրինական սեփականատերերին:

3. Գործելով մյուս Մասնակից պետության կողմից սույն Կոնվենցիայի 12-րդ և 13-րդ հոդվածների համապատասխան ուղարկված խնդրանքով՝ Մասնակից պետությունը կարող է հատուկ քննարկել համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ կնքելու հնարավորությունը հետևյալի մասին.

(ա) հանցագործությունից ստացված եկամուտների կամ գույքի արժեքին համապատասխանող գումարի կամ այդպիսի եկամուտների կամ գույքի կամ դրանց մի մասի իրացման հետևանքով ստացված միջոցները փոխանցելու այն հաշվին, որը, սույն Կոնվենցիայի 30-րդ հոդվածի 2՝ գ կետի համապատասխան, նախատեսված է այդ նպատակի համար, կամ այն միջկառավարական կազմակերպություններին, որոնք մասնագիտացած են կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գործում.

(բ) մյուս Մասնակից պետություններին պարբերաբար կամ միանգամյա հիմունքով հանցագործություններից ստացված եկամուտների կամ գույքի կամ այդպիսի եկամուտների կամ գույքի իրացման հետևանքով ստացված միջոցների մի մասը փոխանցելու՝ իր ներքին օրենսդրությանը կամ վարչական ընթացակարգերին համապատասխան:

Հոդված 15

Իրավասություն

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն այնպիսի միջոցներ է ձեռնարկում, ինչպիսիք կարող են պահանջվել՝ այն հաշվով, որ պարզի իր իրավասությունն այն հանցագործությունների վերաբերյալ, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 23-րդ հոդվածների համապատասխան, երբ.

(ա) հանցագործությունը կատարվել է այդ Մասնակից պետության տարածքում, կամ

(բ) հանցագործությունը կատարվել է նավի վրա, որը հանցագործության կատարման պահին կրում էր այդ Մասնակից պետության դրոշը, կամ օդանավում, որն այդ պահին գրանցված է այդ Մասնակից պետության օրենսդրությանը համապատասխան:

2. Սույն Կոնվենցիայի 4-րդ հոդվածի պահպանման պայմանով Մասնակից պետությունը կարող է իր իրավասությունը հաստատել նաև ցանկացած այդպիսի հանցագործության նկատմամբ, երբ.

(ա) հանցագործությունը կատարվել է այդ Մասնակից պետության քաղաքացու դեմ.

(բ) հանցագործությունը կատարվել է այդ Մասնակից պետության քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող այնպիսի անձի կողմից, որը սովորաբար բնակվում է նրա տարածքում, կամ

(գ) հանցագործությունը՝

(i) համարվում է այն հանցագործություններից մեկը, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համապատասխան, և կատարվել է նրա տարածքի սահմաններից դուրս՝ նրա տարածքում լուրջ հանցագործություն կատարելու նպատակով:

(ii) հանդիսանում է այն հանցագործություններից մեկը, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիայի 6-րդ հոդված 1 (բ) (ii) կետի համապատասխան, և կատարվել է նրա տարածքից դուրս՝ նրա տարածքում որևէ այնպիսի հանցագործություն կատարելու նպատակով, որն այդպիսին է ճանաչվել սույն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին (ա) (i) կամ (ii) կամ (բ) (ii) կետի համապատասխան:

3. Սույն Կոնվենցիայի 16-րդ հոդվածի 10-րդ կետի նպատակների համար յուրաքանչյուր Մասնակից պետություն ձեռնարկում է այնպիսի միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել՝ այն հաշվով, որ պարզի իր իրավասությունն այն հանցագործությունների վերաբերյալ, որոնք ընդգրկված են սույն Կոնվենցիայով, երբ անձը, որը կասկածվում է հանցագործության կատարման մեջ, գտնվում է նրա տարածքում, և նա այդ անձին չի հանձնում միայն այն հիմնավորմամբ, որ նա համարվում է իր քաղաքացիներից մեկը:

4. Յուրաքանչյուր Մասնակից պետություն կարող է ձեռնարկել նաև այնպիսի միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել՝ այն հաշվով, որպեսզի պարզի իր իրավասությունն այն հանցագործությունների նկատմամբ, որոնք ընդգրկված են սույն Կոնվենցիայով, երբ հանցագործության կատարման մեջ կասկածվող անձը գտնվում է նրա տարածքում, և նա չի հանձնում նրան:

5. Եթե սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերի համաձայն իր իրավասությունը իրականացնող Մասնակից պետությունը ծանուցագիր է ստանում կամ այլ ձևով է իմանում այն մասին, որ մեկ կամ մի քանի այլ Մասնակից պետությունները քննություն, քրեական հետապնդում կամ դատաքննություն են իրականացնում միևնույն արարքի կապակցությամբ, ապա այդ Մասնակից պետությունների իրավապահ մարմինները, պատշաճ դեպքերում, միմյանց հետ խորհրդակցություններ են անցկացնում իրենց գործողությունների համակարգման նպատակով:

6. Առանց ընդհանուր միջազգային իրավունքի նորմերին վնասելու՝ սույն Կոնվենցիան չի բացառում ցանկացած քրեական իրավասության իրականացումը, որը Մասնակից պետության կողմից սահմանվել է իր ներքին օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 16

Հանձնում

1. Սույն հոդվածը կիրառվում է այն հանցագործությունների նկատմամբ, որոնք ընդգրկված են սույն Կոնվենցիայով, կամ այն դեպքերում, եթե 3-րդ հոդվածի 1 (ա) կամ բ կետում նշված հանցագործության կատարմանը առնչություն ունի կազմակերպված հանցավոր խումբը, և այն անձը, որի վերաբերյալ հայցվում է հանձնումը, գտնվում է

հայցվող Մասնակից պետության տարածքում, պայմանով, որ արարքը, որի կապակցությամբ հայցվում է հանձնումը, քրեորեն պատժելի է համարվում ինչպես հայցող Մասնակից պետության, այնպես էլ հայցվող Մասնակից պետության ներքին օրենսդրությամբ:

2. Եթե հանձնման մասին խնդրանքը վերաբերում է մի քանի առանձին լուրջ հանցագործությունների, որոնցից մի քանիսը չեն ընդգրկվում սույն հոդվածով, ապա հայցվող Մասնակից պետությունը սույն հոդվածը կարող է կիրառել նաև այդ վերջին հանցագործությունների նկատմամբ:

3. Հանցագործություններից յուրաքանչյուրը, որոնց նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը, որպես հանցագործություն ընդգրկված է համարվում Մասնակից պետությունների միջև գոյություն ունեցող հանձնման մասին ցանկացած պայմանագրի մեջ, որը կարող է հանձնում առաջացնել: Մասնակից պետությունները պարտավորվում են այդպիսի հանցագործությունները, որպես հանձնում առաջացնող հանցագործություններ, մտցնել հանձնման մասին ցանկացած պայմանագրի մեջ, որը կկնքվի նրանց միջև:

4. Եթե Մասնակից պետությունը, որը հանձնումը պայմանավորում է պայմանագրի առկայությամբ, հանձնման մասին խնդրանք է ստանում մյուս Մասնակից պետությունից, որի հետ նա հանձնման մասին պայմանագիր չունի, ապա նա սույն Կոնվենցիան կարող է դիտել որպես իրավական հիմք ցանկացած այնպիսի հանցագործության կապակցությամբ հանձնման համար, որի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը:

5. Մասնակից պետությունները, որոնք հանձնումը պայմանավորում են պայմանագրի առկայությամբ՝

(ա) իրենց վավերագրերը կամ սույն Կոնվենցիայի ընդունման կամ հաստատման կամ դրան միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնելիս Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հայտնում են այն մասին, թե սույն Կոնվենցիան իրենք օգտագործելու են արդյոք որպես իրավական հիմք հանձնման հարցերով սույն Կոնվենցիայի մյուս Մասնակից պետությունների հետ համագործակցության համար, և

(բ) եթե նրանք սույն Կոնվենցիան չեն օգտագործում որպես իրավական հիմք հանձնման հարցերով համագործակցության համար, ապա ձգտում են, պատշաճ դեպքերում, սույն Կոնվենցիայի մյուս Մասնակից պետությունների հետ հանձնման մասին պայմանագրեր կնքել սույն հոդվածի կիրառման նպատակով:

6. Մասնակից պետությունները, որոնք հանձնումը չեն պայմանավորում պայմանագրի առկայությամբ, միմյանց միջև հարաբերություններում այն հանցագործությունները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը, ճանաչում են որպես այնպիսի հանցագործություններ, որոնք կարող են հանձնում առաջացնել:

7. Հանձնումն իրականացվում է հայցվող Մասնակից պետության ներքին օրենսդրությամբ նախատեսվող պայմաններին կամ հանձնման մասին կիրառելի պայմանագրերին համապատասխան, ներառյալ այն պայմանները, որոնք կապված են հանձնման նկատմամբ նվազագույն պատժի պահանջների հետ, և այն հիմքերը, որոնցով հայցվող Մասնակից պետությունը կարող է մերժել հանձնումը:

8. Ցանկացած հանցագործության վերաբերյալ, որի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը, Մասնակից պետությունները, իրենց ներքին օրենսդրությունը պահպանելու պայմանով, ջանք են գործադրում, որ արագացնեն հանձնման ընթացակարգերը և պարզեցնեն դրա հետ կապված ապացույցների տրամադրման վերաբերյալ պահանջները:

9. Իր ներքին օրենսդրության դրույթների և հանձնման մասին իր պայմանագրերի պահպանման պայմանով հայցվող Մասնակից պետությունը, համոզվելով նրանում, որ հանգամանքները դա են պահանջում և կրում են անհետաձգելի բնույթ և հայցող Մասնակից պետության խնդրանքով, կարող է կալանքի վերցնել իր տարածքում գտնվող այն անձին, որի հանձնումը հայցվում է, կամ ձեռնարկել այլ պատշաճ միջոցներ՝ հանձնման ընթացակարգի ժամանակ նրա ներկայությունն ապահովելու համար:

10. Մասնակից պետությունը, որի տարածքում է գտնվում հանցագործության կատարման մեջ կասկածվող անձը, եթե այդ անձին չի հանձնում այն հանցագործության կապակցությամբ, որի նկատմամբ սույն հոդվածը չի կիրառվում միայն այն բանի հիման վրա, որ նա հանդիսանում է նրա քաղաքացիներից մեկը, պարտավոր է, հանձնում հայցող Մասնակից պետության խնդրանքով, առանց չարդարացված ուշացումների գործը փոխանցել իր իրավասու մարմիններին՝ հետապնդման նպատակով: Այդ մարմիններն ընդունում են իրենց որոշումը և վարույթն իրականացնում են նույն կարգով, ինչ այդ Մասնակից պետության ներքին օրենսդրության համաձայն ցանկացած վտանգավոր բնույթի այլ հանցագործության դեպքում: Շահագրգիռ Մասնակից պետությունները միմյանց հետ համագործակցում են, մասնավորապես, դատավարական հարցերով և ապացուցման հարցերով՝ այդպիսի հետապնդման արդյունավետության ապահովման նպատակով:

11. Բոլոր այն դեպքերում, երբ Մասնակից պետությանը, նրա ներքին օրենսդրության համաձայն, թույլատրվում է իր քաղաքացիներից որևէ մեկին հանձնել կամ որևէ այլ ձևով փոխանցել միայն այն պայմանով, որ այդ անձը պետք է վերադարձվի այդ պետություն այն պատիժը կրելու համար, որը նշանակվել է այնպիսի դատաքննության կամ վարույթի արդյունքում, որոնց կապակցությամբ հայցվել է այդ անձի հանձնումը կամ փոխանցումը, և այդ Մասնակից պետությունը, ինչպես և այդ անձի հանձնումը հայցող Մասնակից պետությունը համաձայնել են այդպիսի կարգի և այլ պայմանների հետ, որոնք նրանց կողմից կարող են պատշաճ համարվել, ապա այդպիսի պայմանական հանձնումը կամ փոխանցումը բավարար են համարվում սույն հոդվածի 10-րդ կետով սահմանված պարտավորության կատարման համար:

12. Եթե հանձնումը, որը հայցվում է դատավճիռն ի կատար ածելու նպատակով, մերժվում է, քանի որ հետախուզվող անձը հանդիսանում է հայցվող Մասնակից

պետության քաղաքացի, ապա հայցվող Մասնակիցը, եթե նրա ներքին օրենսդրությունը դա թույլատրում է, և եթե դա համապատասխանում է այդպիսի օրենսդրության պահանջներին, հայցող Մասնակցի դիմումով քննում է այն դատավճիռը կամ դատավճռի մնացած մասն ի կատար ածելու հարցը, որը արձակվել է հայցող Մասնակցի ներքին օրենսդրության համաձայն:

13. Ցանկացած անձի, որի գործով քննություն է իրականացվում որևէ այնպիսի հանցագործության կապակցությամբ, որի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը, վարույթի ցանկացած փուլում երաշխավորվում է արդարացի վերաբերմունք, ներառյալ այն բոլոր իրավունքների և երաշխիքների իրականացումը, որոնք նախատեսված են այն Մասնակից պետության ներքին օրենսդրությամբ, որի տարածքում այդ անձը գտնվում է:

14. Ոչինչ սույն Կոնվենցիայում չի մեկնաբանվում որպես հանձնման պարտավորություն սահմանող, եթե հայցվող Մասնակից պետությունն էական հիմքեր ունի ենթադրելու, որ հանձնման մասին խնդրանքը նպատակ ունի հետապնդելու կամ պատժելու որևէ անձի՝ նրա սեռի, ռասայի, դավանանքի, քաղաքացիության, էթնիկական ծագման կամ քաղաքական համոզմունքների պատճառով, կամ որ այդ խնդրանքի բավարարումն այդ անձի դրությունը կվնասեր այդ պատճառներից որևէ մեկով:

15. Մասնակից պետությունները չեն կարող մերժել հանձնման մասին խնդրանքի կատարումը միայն այն հիմքով, որ հանցագործությունը համարվում է կապված նաև հարկային հարցերի հետ:

16. Մինչև հանձնման մերժումը հայցվող Մասնակից պետությունը, պատշաճ դեպքերում, խորհրդակցություններ է անցկացնում հայցող Մասնակից պետության հետ՝ այն հաշվով, որ նրան բավարար հնարավորություն տրվի իր կարծիքը շարադրելու և իր խնդրանքում շարադրված փաստերի հետ առնչություն ունեցող տեղեկություն ներկայացնելու համար:

17. Մասնակից պետությունները ձգտում են կնքել երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ՝ հանձնումն իրականացնելու կամ արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Հոդված 17

Դատապարտված անձանց փոխանցումը

Մասնակից պետությունները կարող են քննել սույն Կոնվենցիայով ընդգրկված հանցագործությունների համար բանտային ռեժիմի կամ ազատագրկման այլ ձևերի դատապարտված անձանց փոխանցման մասին երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի և պայմանավորվածությունների կնքման հնարավորությունը, որպեսզի նրանք կարողանան պատժի ժամկետը կրել նրանց տարածքում:

Հոդված 18

Փոխադարձ իրավական օգնությունը

1. Մասնակից պետությունները միմյանց ամենալայն իրավական օգնություն են ցույց տալիս այն հանցագործությունների հետ կապված քննության, քրեական հետապնդման և դատաքննության գործում, որոնք ընդգրկվում են սույն Կոնվենցիայով, ինչպես դա նախատեսված է 3-րդ հոդվածով և փոխադարձության հիման վրա, միմյանց նմանօրինակ այլ օգնություն են տրամադրում, եթե հայցող Մասնակից պետությունը ողջամիտ հիմքեր ունի կասկածելու, որ 3-րդ հոդվածի ա և բ կետերում նշված հանցագործությունն իր բնույթով անդրազգային է համարվում և, այդ թվում՝ որ տուժողները, վկաները, եկամուտները, հանցագործությունների կատարման միջոցները կամ այդպիսի հանցագործությունների վերաբերյալ ապացույցները գտնվում են հայցվող Մասնակից պետությունում, ինչպես նաև՝ որ այդ հանցագործության կատարմանը առնչություն ունի կազմակերպված հանցավոր խումբը:

2. Փոխադարձ իրավական օգնությունը տրամադրվում է այն ծավալով, որն առավելագույնս հնարավոր է հայցվող Մասնակից պետության համապատասխան օրենքների, պայմանագրերի և պայմանավորվածությունների համաձայն՝ այն հանցագործությունների կապակցությամբ քննության, քրեական հետապնդման և դատաքննության վերաբերյալ, որոնց կատարման համար հայցող Մասնակից պետությունում, սույն Կոնվենցիայի 10-րդ հոդվածին համապատասխան, կարող է պատասխանատվության ենթարկվել իրավաբանական անձը:

3. Սույն Կոնվենցիայի համապատասխան տրամադրվող փոխադարձ իրավական օգնությունը կարող է հայցվել հետևյալ ցանկացած նպատակներով.

(ա) առանձին անձանցից վկայի ցուցմունքներ կամ դիմումներ ստանալու համար.

(բ) դատական փաստաթղթեր հանձնելու համար.

(գ) խուզարկություն անցկացնելու և առգրավում կամ կալանք կատարելու համար.

(դ) օբյեկտները և տեղանքը զննելու համար.

(ե) տեղեկություն, ապացույցներ և փորձագետների գնահատականներ տրամադրելու համար.

(զ) համապատասխան փաստաթղթերի և նյութերի բնօրինակները և հաստատված պատճենները տրամադրելու համար, ներառյալ կառավարական, բանկային, ֆինանսական, կորպորատիվ և առևտրային փաստաթղթերը.

(է) հանցագործությունից ստացված եկամուտները, գույքը, հանցագործությունների կազմակերպման միջոցները կամ ապացուցման նպատակների համար այլ առարկաները բացահայտելու կամ հետախուզելու համար.

(ը) հայցող Մասնակից պետության մարմիններ համապատասխան անձանց կամավոր ներկայանալուն աջակցելու համար.

(թ) ցանկացած այլ տեսակի օգնություն ցույց տալու համար, որը չի հակասում հայցվող Մասնակից պետության ներքին օրենսդրությանը:

4. Առանց ներքին օրենսդրությանը վնասելու Մասնակից պետության իրավասու մարմինները, առանց նախնական խնդրանքի, մյուս Մասնակից պետությունում գտնվող իրավասու մարմինն կարող են քրեաիրավական հարցերին վերաբերող տեղեկություն փոխանցել այն դեպքերում, երբ նրանք գտնում են, որ այդպիսի տեղեկությունը այդ մարմինն կարող է օգնել քննություն կամ քրեական հետապնդում իրականացնելու կամ հաջող ավարտելու գործում կամ կարող է հանգեցնել այդ Մասնակից պետության կողմից սույն Կոնվենցիային համապատասխան կազմված խնդրանքին:

5. Սույն հոդվածի 4-րդ կետի համապատասխան տեղեկության փոխանցումը իրականացվում է առանց վնասելու պետությունում այն մարմինների քննությանը և քրեական հետապնդմանը, որոնք տեղեկություն են տրամադրում: Տեղեկությունը ստացող իրավասու մարմինները կատարում են այդ տեղեկության գաղտնի բնույթը պահպանելու մասին խնդրանքը, նույնիսկ ժամանակավոր հիմունքներով, կամ պահպանում են դրա օգտագործման նկատմամբ սահմանափակումները: Դա, սակայն, չի խոչընդոտում տեղեկությունը ստացող Մասնակից պետությանը՝ իր տարածքում անցկացվող դատավարության ընթացքում հրապարակելու այն տեղեկությունը, որն արդարացնում է մեղադրյալին: Այդպիսի դեպքում, մինչև տեղեկության հրապարակումը, տեղեկությունը ստացող Մասնակից պետությունը այն տրամադրող Մասնակից պետությանը ծանուցում է և, եթե այդ մասին խնդրանք է ստացվել, խորհրդակցություններ է անցկացնում տեղեկությունը տրամադրող Մասնակից պետության հետ: Եթե, բացառիկ դեպքերում, նախօրոք ծանուցելն անհնարին է, ապա տեղեկությունը ստացող Մասնակից պետությունը այդպիսի հրապարակման մասին անհապաղ հայտնում է տեղեկությունը տրամադրած Մասնակից պետությանը:

6. Սույն հոդվածի դրույթները չեն շոշափում որևէ այլ պայմանագրով պարտավորությունները՝ լինեն դրանք երկկողմ թե բազմակողմ, որը լրիվ կամ մասնակիորեն կարգավորում է կամ կարգավորելու է փոխադարձ իրավական օգնությունը:

7. Սույն հոդվածի 9-29-րդ կետերը սույն հոդվածի հիման վրա ուղարկված խնդրանքների նկատմամբ կիրառվում են, եթե համապատասխան Մասնակից պետությունները կապված չեն փոխադարձ իրավական օգնության մասին որևէ պայմանագրով: Եթե այդ Մասնակից պետությունները կապված են այդպիսի պայմանագրով, ապա կիրառվում են այդ պայմանագրի համապատասխան դրույթները, եթե միայն Մասնակից պետությունները չեն համաձայնում դրանց փոխարեն կիրառել սույն հոդվածի 9-29-րդ կետերը: Մասնակից պետություններին հաստատակամորեն առաջարկվում է կիրառել այդ կետերը, եթե դա նպաստում է համագործակցությանը:

8. Մասնակից պետությունները չեն մերժում սույն հոդվածի համաձայն փոխադարձ իրավական օգնություն տրամադրելը բանկային գաղտնիքի հիման վրա:

9. Մասնակից պետությունները կարող են մերժել սույն հոդվածի համաձայն փոխադարձ իրավական օգնություն տրամադրելը համապատասխան արարքը երկուստեք որպես հանցագործություն ճանաչելու բացակայության հիման վրա: Մակայն հայցվող Մասնակից պետությունը կարող է, եթե նա դա պատշաճ համարի, տրամադրել օգնություն, որի ծավալը նա որոշում է իր հայեցողությամբ՝ անկախ այն բանից, թե համապատասխան արարքը, հայցվող Մասնակից պետության ներքին օրենսդրության համաձայն, համարվո՞ւմ է արդյոք հանցագործություն:

10. Անձը, որը կալանքի տակ է գտնվում կամ ազատագրկման ձևով պատիժը կրում է մի Մասնակից պետության տարածքում, և որի ներկայությունը մյուս Մասնակից պետությունում պահանջվում է ինքնությունը պարզելու, ցուցմունքներ տալու կամ քննության, քրեական հետապնդման կամ դատաքննության ապացույցներ ստանալու համար այլ օգնություն ցույց տալու նպատակների համար այնպիսի հանցագործությունների կապակցությամբ, որոնք ընդգրկվում են սույն Կոնվենցիայով, կարող է փոխանցվել հետևյալ պայմանների պահպանումով.

(ա) տվյալ անձը ազատորեն տալիս է դրա վերաբերյալ իր գիտակցված համաձայնությունը.

(բ) երկու Մասնակից պետությունների իրավասու մարմինները համաձայնության են եկել այնպիսի պայմաններով, որոնք այդ Մասնակից պետությունները կարող են պատշաճ համարել:

11. Սույն հոդվածի 10-րդ կետի նպատակների համար՝

(ա) Մասնակից պետությունը, որին անձը փոխանցվում է, իրավունք ունի և պարտավոր է փոխանցված անձին պահել կալանքի տակ, եթե միայն Մասնակից պետությունը, որն այդ անձին փոխանցել է , այլ բան չի խնդրել կամ այլ բան չի թույլատրել.

(բ) Մասնակից պետությունը, որին անձը փոխանցվում է, անհապաղ կատարում է այդ անձի այն Մասնակից պետության տրամադրության տակ վերադարձնելու իր պարտավորությունը, որը փոխանցել է այդ անձին, ինչպես դա ավելի վաղ համաձայնեցված է եղել, կամ ինչպես այն այլ ձևով համաձայնեցված է եղել երկու Մասնակից պետությունների իրավասու մարմինների կողմից.

(գ) Մասնակից պետությունը, որին անձը փոխանցվում է, Մասնակից պետությունից, որը փոխանցել է այդ անձին, չի պահանջում, որ նրան վերադարձնելու համար հանձնման ընթացակարգ հարուցվի.

(դ) փոխանցված անձի պատժի ժամկետի մեջ, որը նա կրում է իրեն փոխանցած պետությունում, հաշվարկվում է այն Մասնակից պետությունում կալանքի տակ գտնվելու ժամկետը, որին նա փոխանցվել է:

12. Առանց այն Մասնակից պետության համաձայնության, որը սույն հոդվածի 10-րդ և 11-րդ կետերի համապատասխան պետք է փոխանցի որևէ անձի, այդ անձը, անկախ

նրա քաղաքացիությունից, չի ենթարկվում քրեական հետապնդման, կալանքի, պատժի կամ անձնական ազատության որևէ այլ սահմանափակման այն պետության տարածքում, որին այդ անձը փոխանցվում է՝ կապված մինչև նրան փոխանցող պետության տարածքից մեկնելն ընկած ժամանակահատվածին վերաբերող գործողության, անգործության կամ դատապարտման հետ:

13. Յուրաքանչյուր Մասնակից պետություն նշանակում է կենտրոնական մարմին, որը պատասխանատվություն է կրում փոխադարձ իրավական օգնության մասին խնդրանքները ստանալու կամ դրանց կատարման կամ դրանց կատարման համար իրավասու մարմիններին ուղարկելու համար և օժտված է համապատասխան լիազորություններով: Եթե Մասնակից պետությունում գոյություն ունի հատուկ տարածաշրջան կամ տարածք փոխադարձ իրավական օգնություն ցույց տալու առանձին համակարգով, ապա նա կարող է նշանակել հատուկ կենտրոնական մարմին, որը պետք է կատարի այդ նույն գործառույթը այդ տարածաշրջանի կամ տարածքի վերաբերյալ: Կենտրոնական մարմինները ապահովում են ստացված խնդրանքների օպերատիվ և պատշաճ կատարումը կամ վերաառաքումը: Եթե կենտրոնական մարմինը կատարման համար խնդրանքն ուղարկում է իրավասու մարմնին, ապա նա աջակցում է իրավասու մարմնի կողմից այդ խնդրանքի օպերատիվ և պատշաճ կատարմանը: Յուրաքանչյուր Մասնակից պետության կողմից իր վավերագիրը կամ սույն Կոնվենցիայի ընդունման կամ հաստատման կամ դրան միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը ծանուցվում է այդ նպատակով նշանակված կենտրոնական մարմնի մասին: Փոխադարձ իրավական օգնություն ցույց տալու մասին խնդրանքները և դրանց վերաբերող ցանկացած հաղորդումներն ուղարկվում են Մասնակից պետությունների կողմից նշանակված կենտրոնական մարմիններին: Այդ պահանջը չի վնասում Մասնակից պետության իրավունքին՝ պահանջելու, որ այդպիսի խնդրանքները և հաղորդումները իրեն ուղարկվեն դիվանագիտական ուղիներով և արտակարգ հանգամանքների դեպքում, երբ Մասնակից պետություններն այդ մասին պայմանավորվել են Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության միջոցով, եթե դա հնարավոր է:

14. Խնդրանքներն ուղարկվում են գրավոր կամ, եթե դա հնարավոր է, գրավոր գրանցում կատարելու հնարավորություն տրամադրող ցանկացած միջոցների օգնությամբ, հայցվող Մասնակից պետության համար ընդունելի լեզվով՝ այն պայմաններով, որոնք այդ Մասնակից պետությանը հնարավորություն կտան պարզելու նույնականությունը:

Վավերագիրը կամ սույն Կոնվենցիան ընդունելու կամ հաստատելու կամ դրան միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը ծանուցվում է այն լեզվի կամ լեզուների մասին, որոնք ընդունելի են յուրաքանչյուր Մասնակից պետության համար: Արտակարգ հանգամանքների և Մասնակից պետությունների կողմից դա համաձայնեցվելու դեպքում խնդրանքները կարող են ուղարկվել բանավոր, սակայն դրանք անհապաղ հաստատվում են գրավոր:

15. Փոխադարձ իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ խնդրանքում նշվում են՝

(ա) խնդրանքով դիմող մարմնի անվանումը.

(բ) հարցի էությունը և քննության, քրեական հետապնդման կամ դատաքննության բնույթը, որոնց վերաբերում է խնդրանքը, ինչպես նաև քննությունը, քրեական հետապնդումը կամ դատաքննությունը իրականացնող մարմնի անվանումը և գործառույթները.

(գ) համապատասխան փաստերի համառոտ շարադրանքը, բացառությամբ այն բանի, ինչը վերաբերում է դատական փաստաթղթերի հանձնմանը.

(դ) հայցվող օգնության նկարագրությունը և ցանկացած որոշակի ընթացակարգի մասին մանրամասն տեղեկությունը, որի պահպանումը կցանկանար ապահովել հայցող Մասնակից պետությունը.

(ե) ըստ հնարավորության՝ տվյալներ ցանկացած համապատասխան անձի անձնավորության, գտնվելու վայրի և քաղաքացիության մասին.

(զ) հայցվող ապացույցների, տեղեկության կամ միջոցների նպատակը:

16. Հայցվող Մասնակից պետությունը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություն, եթե այդ տեղեկությունը, իր ներքին օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտ է համարվում խնդրանքը կատարելու համար, կամ եթե այդ տեղեկությունը կարող է հեշտացնել այդ խնդրանքի կատարումը:

17. Խնդրանքը կատարվում է հայցվող Մասնակից պետության ներքին օրենսդրությանը համապատասխան և այն չափով, որքանով դա չի հակասում հայցվող Մասնակից պետության ներքին օրենսդրությանը և ըստ հնարավորության, խնդրանքում նշված ընթացակարգերին համապատասխան:

18. Այն չափով, որքանով դա հնարավոր է և համապատասխանում է ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին, եթե որևէ անձ գտնվում է Մասնակից պետության տարածքում և որպես վկա կամ փորձագետ պետք է լավի մյուս Մասնակից պետության դատական մարմինների կողմից, առաջին Մասնակից պետությունը, մյուս Մասնակից պետության խնդրանքով, կարող է թույլ տալ լսումն իրականացնել տեսակապի օգնությամբ, եթե համապատասխան անձի ներկայությունը հայցող Մասնակից պետության տարածքում հնարավոր կամ ցանկալի չի համարվում: Մասնակից պետությունները կարող են պայմանավորվել, որ հայցող Մասնակից պետության դատական մարմնի կողմից լսումն իրականացվի հայցվող Մասնակից պետության դատական մարմնի ներկայացուցիչների ներկայությամբ:

19. Հայցող Մասնակից պետությունը չի փոխանցում և չի օգտագործում մեկ ուրիշ քննության, քրեական հետապնդման կամ դատաքննության իրականացման համար

հայցվող Մասնակից պետության կողմից ներկայացված տեղեկությունը կամ ապացույցները, քան այն, որոնք նշված են խնդրանքում առանց դրա համար հայցվող Մասնակից պետության նախնական համաձայնության: Սույն կետում ոչինչ չի խոչընդոտում հայցող Մասնակից պետությանն իր տարածքում անցկացվող դատավարության ընթացքում բացահայտել այն տեղեկությունը կամ ապացույցները, որոնք արդարացնում են մեղադրյալին: Այդ դեպքում, մինչև տեղեկության կամ ապացույցների բացահայտումը, հայցող Մասնակից պետությունը ծանուցում է հայցվող Մասնակից պետությանը և, եթե այդ մասին խնդրանք է ստացվել, խորհրդակցություններ է անցկացնում հայցվող Մասնակից պետության հետ: Եթե, բացառիկ դեպքերում, հնարավոր չէ նախօրոք ծանուցել, ապա հայցող Մասնակից պետությունն այդպիսի հրապարակման մասին անհապաղ ծանուցում է հայցվող Մասնակից պետությանը:

20. Հայցող Մասնակից պետությունը կարող է պահանջել, որ հայցվող Մասնակից պետությունը պահպանի խնդրանքի առկայության և էության գաղտնիությունը, բացառությամբ այն բանի, ինչն անհրաժեշտ է հենց խնդրանքը կատարելու համար: Եթե հայցվող Մասնակից պետությունը չի կարող կատարել գաղտնիության մասին պահանջը, ապա նա այդ մասին անհապաղ հայտնում է հայցող Մասնակից պետությանը:

21. Փոխադարձ իրավական օգնություն ցույց տալը կարող է մերժվել.

(ա) եթե խնդրանքը ներկայացված չի եղել սույն հոդվածի դրույթներին համապատասխան.

(բ) եթե հայցվող Մասնակից պետությունը կարծում է, որ խնդրանքի կատարումը կարող է վնասել իր ինքնիշխանությանը, անվտանգությանը, հանրային կարգին կամ կենսականորեն կարևոր այլ շահերին.

(գ) եթե հայցվող Մասնակից պետության ներքին օրենսդրությունը նրա մարմիններին արգելում է ցանկացած համանման հանցագործության վերաբերյալ իրականացնել հայցվող միջոցներ, եթե այդպիսի հանցագործությունը քննության, քրեական հետապնդման կամ դատաքննության առարկա հանդիսանար իր իրավասության սահմաններում.

(դ) եթե խնդրանքի կատարումը հակասում է փոխադարձ իրավական օգնության առնչությամբ հայցվող Մասնակից պետության իրավական համակարգին:

22. Մասնակից պետությունները չեն կարող մերժել փոխադարձ իրավական օգնության մասին խնդրանքի կատարումը միայն այն հիմնավորմամբ, թե համարվում է, որ հանցագործությունը կապված է նաև հարկային հարցերի հետ:

23. Փոխադարձ իրավական օգնություն ցույց տալու ցանկացած մերժում պատճառաբանվում է:

24. Հայցվող Մասնակից պետությունը փոխադարձ իրավական օգնություն ցույց տալու մասին խնդրանքը կատարում է հնարավորինս կարճ ժամկետներում և, որքան հնարավոր է, ամբողջությամբ հաշվի է առնում հայցող Մասնակից պետության կողմից առաջարկված առավելագույն սահմանային ժամկետները, որոնք պատճառաբանված են, նախընտրելիորեն, հենց խնդրանքում: Հայցվող Մասնակից պետությունը պատասխանում է հայցող Մասնակից պետության խնդրանքի կատարման ընթացքի վերաբերյալ ողջամիտ հարցումներին: Հայցող Մասնակից պետությունը օպերատիվորեն հայտնում է հայցվող Մասնակից պետությանը, որ հայցվող օգնության անհրաժեշտություն այլևս չկա:

25. Հայցվող Մասնակից պետության կողմից կարող է հետաձգվել փոխադարձ իրավական օգնություն ցույց տալը այն հիմնավորումով, որ դա կխոչընդոտի իրականացվող քննությանը, քրեական հետապնդմանը կամ դատաքննությանը:

26. Մինչև սույն հոդվածի 21-րդ կետի համաձայն խնդրանքի կատարումը մերժելը կամ սույն հոդվածի 25-րդ կետի համաձայն դրա կատարումը հետաձգելը, հայցվող Մասնակից պետությունը խորհրդակցություններ է անցկացնում հայցող Մասնակից պետության հետ՝ այն նպատակով, որ որոշի՝ կարո՞ղ է արդյոք օգնությունը տրամադրվել այնպիսի ժամկետներում և այնպիսի պայմաններով, ինչպիսիք հայցվող Մասնակից պետությունը անհրաժեշտ է համարում: Եթե հայցող Մասնակից պետությունը օգնությունն ընդունում է այդ պայմաններով, ապա նա պահպանում է այդ պայմանները:

27. Առանց սույն հոդվածի 12-րդ կետի կիրառմանը վնասելու, վկան, փորձագետը կամ այլ անձը, որը հայցող Մասնակից պետության խնդրանքով համաձայնում է ցուցմունք տալ դատավարության ընթացքում կամ օգնություն ցույց տալ հայցող Մասնակից պետության տարածքում իրականացվող քննության, քրեական հետապնդման կամ դատաքննության ընթացքում, այդ տարածքում չեն ենթարկվում քրեական հետապնդման, կալանքի, պատժի կամ իրենց անձնական ազատության որևէ այլ սահմանափակման՝ այն գործողությունների, անգործության կամ դատապարտման կապակցությամբ, որը վերաբերում է հայցվող Մասնակից պետության տարածքից մեկնելուն նախորդող ժամանակահատվածին: Անձնական անվտանգության այդպիսի գործողությունը դադարեցվում է, եթե վկան, փորձագետը կամ այլ անձը տասնհինգ հաջորդական օրերի ընթացքում կամ Մասնակից պետությունների միջև համաձայնեցված այլ ժամկետում, սկսած այն ամիս-ամսաթվից, երբ այդ անձինք պաշտոնապես ծանուցված են եղել այն մասին, որ դատական մարմիններին իրենց ներկայությունն այլևս չի պահանջվում, հնարավորություն ունենին լքելու հայցող Մասնակից պետության տարածքը, բայց, այնուամենայնիվ, կամավոր մնացել են այդ տարածքում, կամ, լքելով այն, սեփական կամքով հետ են վերադարձել:

28. Խնդրանքի կատարման հետ կապված սովորական ծախսերը ծածկվում են հայցվող Մասնակից պետության կողմից, եթե շահագրգիռ Մասնակից պետությունները այլ բան չեն պայմանավորվել: Եթե խնդրանքի կատարումը պահանջում է կամ կպահանջի էական կամ արտակարգ ծախսեր, ապա Մասնակից պետությունները խորհրդակցություններ են անցկացնում այն պայմանները, ինչպես

նան ծախսերը ծածկելու կարգը որոշելու նպատակով, որոնց հիման վրա խնդրանքը կատարվելու է:

29. Հայցվող Մասնակից պետությունը՝

(ա) հայցող Մասնակից պետությանը տրամադրում է իր ձեռքի տակ գտնվող և իր ներքին օրենսդրության համապատասխան հանրային իրազեկման համար բաց կառավարական նյութերի, փաստաթղթերի կամ տեղեկության պատճենները.

(բ) իր հայեցողությամբ հայցող Մասնակից պետությանը կարող է լրիվ կամ մասամբ կամ այնպիսի պայմանների պահպանմամբ, ինչպիսիք նա պատշաճ կհամարի, տրամադրել ցանկացած կառավարական նյութերի, փաստաթղթերի կամ տեղեկության պատճենները, որոնք գտնվում են նրա տրամադրության տակ, և որոնք, նրա ներքին օրենսդրության համապատասխան, բաց են հանրային իրազեկման համար:

30. Մասնակից պետությունները, ըստ անհրաժեշտության, քննարկում են երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների կնքման հնարավորությունը, որոնք կհամապատասխանեն սույն հոդվածի նպատակներին, կապահովելին նրա գործողությունը պրակտիկայում կամ կամրապնդելին նրա դրույթները:

Հոդված 19

Համատեղ քննություններ

Մասնակից պետությունները քննարկում են երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների կնքման հնարավորությունը, որոնց ուժով մեկ կամ մի քանի պետություններում քննության, քրեական հետապնդման կամ դատական քննության առարկա համարվող գործերի կապակցությամբ շահագրգիռ իրավասու մարմինները կարող են ստեղծել համատեղ քննություններ կատարող մարմիններ: Այդպիսի համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների բացակայության դեպքում համատեղ քննությունները կարող են անցկացվել յուրաքանչյուր առանձին դեպքում՝ ըստ համաձայնության: Համապատասխան Մասնակից պետությունները ապահովում են այն Մասնակից պետության ինքնիշխանության լիակատար հարգումը, որի տարածքում պետք է անցկացվի այդպիսի քննությունը:

Հոդված 20

Քննության հատուկ մեթոդները

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, եթե դա թույլատրվում է նրա ներքին իրավական համակարգի սկզբունքներով, իր հնարավորությունների սահմաններում և իր ներքին օրենսդրությամբ սահմանված պայմաններով, անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ այն հաշվով, որ թույլատրի վերահսկելի մատակարարումների

պատշաճ օգտագործումը, նաև այն դեպքերում, երբ նա դա պատեհ է համարում, քննության այլ հատուկ մեթոդների օգտագործումը, ինչպես էլեկտրոնային դիտարկումը կամ դիտարկման այլ ձևերը, ինչպես նաև նրա իրավասու մարմինների կողմից նրա տարածքում գործակալական գործառնությունները՝ կազմակերպված հանցավորության դեմ արդյունավետ պայքար մղելու նպատակով:

2. Սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործությունների քննության նպատակով Մասնակից պետությունները խրախուսվում են կնքելու, անհրաժեշտության դեպքում, համապատասխան երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ միջազգային մակարդակով համագործակցության համատեքստում քննության այդպիսի հատուկ մեթոդների օգտագործման համար: Այդպիսի համաձայնագրերը կամ պայմանավորվածությունները կնքվում և իրականացվում են պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքի լրիվ պահպանմամբ և իրագործվում են այդ համաձայնագրերի ու պայմանավորվածությունների պայմաններին խիստ համապատասխան:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված համաձայնագրի կամ պայմանավորվածության բացակայության դեպքում քննության այդպիսի հատուկ մեթոդների միջազգային մակարդակով օգտագործման մասին որոշումներն ընդունվում են յուրաքանչյուր առանձին դեպքում և կարող են, ըստ անհրաժեշտության, հաշվի առնել շահագրգիռ Մասնակից պետությունների կողմից իրավասության իրականացման վերաբերյալ ֆինանսական պայմանավորվածությունները և փոխըմբռնումը:

4. Վերահսկվող մատակարարումների՝ միջազգային մակարդակով օգտագործման մասին որոշումները, շահագրգիռ Մասնակից պետությունների համաձայնությամբ, կարող են ներառել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են բեռների գրավումը և դրանք ձեռք չտված թողնելը կամ դրանք առգրավելը կամ փոխելը՝ լրիվ կամ մասնակիորեն:

Հոդված 21

Քրեական վարույթը փոխանցելը

Մասնակից պետությունները քննարկում են սույն Կոնվենցիայով ընդգրկված հանցագործության կապակցությամբ քրեական հետապնդման նպատակով վարույթի փոխադարձ փոխանցման հնարավորությունը այն դեպքերում, երբ համարվում է, որ այդպիսի փոխանցումը բխում է արդարադատության պատշաճ իրականացման շահերից, մասնավորապես, այն դեպքերում, երբ շոշափվում են մի քանի իրավասություններ քրեական գործերի միավորման ապահովման համար:

Հոդված 22

Դատվածության մասին տվյալները

Յուրաքանչյուր Մասնակից պետություն կարող է ձեռնարկել այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, ինչպիսիք քննվող հանցագործության կատարման մեջ կասկածվող անձի նկատմամբ մյուս պետությունում նախկինում կայացված ցանկացած

մեղադրական դատավճռի հաշվառման համար կարող են պահանջվել՝ այնպիսի պայմաններով և նպատակներով, որոնք նա պատշաճ է համարում այդպիսի տեղեկությունը սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործության կապակցությամբ իրականացվող քրեական վարույթի ընթացքում օգտագործելու համար:

Հոդված 23

Արդարադատության իրականացմանը խոչընդոտելու քրեականացումը

Յուրաքանչյուր Մասնակից պետություն այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ է ձեռնարկում, ինչպիսիք կարող են պահանջվել՝ այն հաշվով, որ քրեորեն պատժելի ճանաչվեն հետևյալ արարքները, երբ դրանք կատարվում են դիտավորությամբ.

ա) ֆիզիկական ուժ, սպառնալիք կիրառելը կամ վախեցնելը կամ անիրավաչափ առավելություններ առաջարկելը կամ տրամադրելը՝ սուտ ցուցմունքներ տալուն տրամադրելու կամ ցուցմունքներ տալու գործընթացին միջամտելու կամ սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործությունների կատարման կապակցությամբ իրականացվող վարույթի ընթացքում ապացույցներ ներկայացնելու նպատակով.

բ) ֆիզիկական ուժ, սպառնալիք կիրառելը կամ վախեցնելը՝ սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործությունների կատարման կապակցությամբ իրականացվող դատավարության ընթացքում դատական կամ իրավապահ մարմինների պաշտոնատար անձի կողմից՝ իր պաշտոնական պարտականությունների կատարմանը միջամտելու նպատակով: Սույն ենթակետում ոչինչ չի վնասում Մասնակից պետությունների իրավունքին՝ ունենալու այլ կատեգորիայի հանրային պաշտոնատար անձանց պաշտպանությունն ապահովող օրենսդրություն:

Հոդված 24

Վկաների պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն իր հնարավորությունների սահմաններում պատշաճ միջոցներ է ձեռնարկում՝ ուղղված քրեական վարույթին մասնակցող այն վկաների վերաբերյալ հավանական վրեժից կամ վախեցնելուց արդյունավետ պաշտպանության ապահովմանը, որոնք ցուցմունք են տալիս սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործությունների կապակցությամբ և, պատշաճ դեպքերում, նրանց հարազատների և նրանց մերձավոր այլ անձանց վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված միջոցները առանց մեղադրյալի իրավունքներին վնասելու, այդ թվում՝ պատշաճ քննության իրավունքին, կարող են, մասնավորապես, ներառել.

(ա) այդպիսի անձանց ֆիզիկական պաշտպանության համար ընթացակարգերի սահմանում, օրինակ՝ այն չափով, որքանով դա անհրաժեշտ է և գործնականորեն իրականանալի, նրանց այլ տեղ վերաբնակեցնելու համար, և այնպիսի դրույթների ընդունումը, ինչպիսիք, պատշաճ դեպքերում, թույլ են տալիս չհրապարակել

այդպիսի անձանց՝ անձին և գտնվելու վայրին վերաբերող տեղեկությունը կամ սահմանափակումներ են դնում այդպիսի տեղեկության հրապարակման համար.

(բ) ապացուցման այնպիսի կանոնների ընդունումը, որոնք թույլ են տալիս վկաներին ցուցմունքներ տալ այնպես, որն ապահովում է վկայի անվտանգությունը, օրինակ՝ կապի միջոցների օգնությամբ վկայի՝ ցուցմունքներ տալու թույլտվությունը, ինչպիսիք են՝ տեսակապը կամ այլ պատշաճ միջոցները:

3. Մասնակից պետությունները քննարկում են այլ պետությունների հետ այն անձանց վերաբնակեցման առնչությամբ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների կնքման վերաբերյալ հարցը, որոնք նշված են սույն հոդվածի 1-ին կետում:

4. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են նաև տուժողների նկատմամբ՝ այնքանով, որքանով նրանք վկաներ են հանդիսանում:

Հոդված 25

Տուժողներին օգնելը և նրանց պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն իր հնարավորությունների սահմաններում պատշաճ միջոցներ է ձեռնարկում սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործություններից տուժողներին օգնություն և պաշտպանություն տրամադրելու համար. հատկապես վրեժի սպառնալիքի կամ վախեցնելու դեպքերում:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն անհրաժեշտ ընթացակարգեր է սահմանում սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործություններից տուժածների համար վնասի փոխհատուցման և հատուցման մատչելիություն ապահովելու համար:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրությունը պահպանելու պայմանով, հնարավորություններ է ստեղծում տուժողների կարծիքներն ու մտավախությունները քննելու և շարադրելու համար՝ այն անձանց նկատմամբ իրականացվող քրեական վարույթի համապատասխան փուլերում, որոնք հանցագործությունը կատարել են այն ձևով, որ դա չվնասի պաշտպանության իրավունքներին:

Հոդված 26

Իրավապահ մարմինների հետ համագործակցության ընդլայնմանն ուղղված միջոցներ

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում, որպեսզի խրախուսի այն անձանց, որոնք մասնակցում են կամ մասնակցել են կազմակերպված հանցավոր խմբերում, հետևյալ նպատակով.

(ա) տրամադրելու տեղեկություն, որն իրավասու մարմինների համար օգտակար է այնպիսի հարցերի կապակցությամբ քննության և ապացուցման նպատակով, ինչպիսիք են.

(i) կազմակերպված հանցավոր խմբերի նույնականացման տվյալները, բնույթը, անդամների կազմը, կառուցվածքը, գտնվելու վայրը կամ գործունեությունը.

(ii) կապերը, այդ թվում՝ միջազգային կապերը, այլ կազմակերպված հանցավոր խմբերի հետ.

(iii) այն հանցագործությունները, որոնք կատարել են կամ կարող են կատարել կազմակերպված հանցավոր խմբերը.

(բ) իրավասու մարմիններին տրամադրելու փաստացի, որոշակի օգնություն, որը կարող է նպաստել կազմակերպված հանցավոր խմբերի՝ իրենց պաշարներից կամ հանցագործություններից ստացված եկամուտներից զրկվելուն:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն քննարկում է այն մասին հարցը, որպեսզի, պատշաճ դեպքերում, նախատեսի այն անձի պատիժը թեթևացնելու հնարավորությունը, որը էականորեն համագործակցում է սույն Կոնվենցիայով ընդգրկվող որևէ հանցագործության կապակցությամբ իրականացվող քննությանը կամ քրեական հետապնդմանը:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ուսումնասիրում է, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, այն անձին քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տրամադրելու հնարավորության մասին հարցը, որն էականորեն համագործակցում է սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործության կապակցությամբ իրականացվող քննությանը կամ քրեական հետապնդմանը:

4. Այդպիսի անձանց պաշտպանությունն իրականացվում է սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածով նախատեսված կարգով:

5. Այն դեպքերում, երբ անձը, որը հիշատակված է սույն հոդվածի 1-ին կետում և գտնվում է մի Մասնակից պետությունում, կարող է էականորեն համագործակցել մյուս Մասնակից պետության իրավասու մարմինների հետ, շահագրգիռ Մասնակից պետությունները կարող են քննարկել մյուս Մասնակից պետություններին այնպիսի ռեժիմ տրամադրելու հնարավորության առնչությամբ իրենց ներքին օրենսդրությանը համապատասխան համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ կնքելու հնարավորությունը, որը նշված է սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում:

Հոդված 27

Համագործակցությունը իրավապահ մարմինների միջև

1. Մասնակից պետությունները, գործելով իրենց ներքին իրավական և վարչական համակարգերին համապատասխան, միմյանց հետ սերտորեն համագործակցում են

սույն Կոնվենցիայով ընդգրկված հանցագործությունների դեմ պայքարի համար իրավակիրառական միջոցների արդյունավետության բարձրացման նպատակով:

Յուրաքանչյուր Մասնակից պետություն, մասնավորապես, արդյունավետ միջոցներ է ձեռնարկում, որոնք ուղղված են.

(ա) իրենց իրավասու մարմինների, հիմնարկների և ծառայությունների միջև կապի ուղիների ամրապնդմանը կամ, որտեղ անհրաժեշտ է, դրանց տեղադրմանը՝ այն հաշվով, որ ապահովվի այն հանցագործությունների բոլոր կողմերի վերաբերյալ տեղեկության պատշաճ և արագ փոխանակումը, որոնք ընդգրկված են սույն Կոնվենցիայով, ներառյալ, եթե շահագրգիռ Մասնակից պետությունները դա պատշաճ կհամարեն, այլ տեսակի հանցավոր գործունեության հետ կապերը.

(բ) այլ Մասնակից պետությունների հետ սույն Կոնվենցիայով ընդգրկված հանցագործությունների կապակցությամբ քննությունների անցկացման գործում համագործակցությանը՝ նպատակ ունենալով բացահայտել.

(i) այդպիսի հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձանց անձր, գտնվելու վայրը և գործունեությունը կամ առնչություն ունեցող այլ անձանց գտնվելու վայրը.

(ii) հանցագործություններից ստացված եկամուտների կամ այդպիսի հանցագործությունների կատարման արդյունքում ստացված գույքի տեղափոխումը.

(iii) գույքի, սարքավորումների կամ այլ միջոցների տեղափոխումը, որոնք օգտագործվել են կամ նախատեսվել են այդպիսի հանցագործություններ կատարելու ժամանակ օգտագործելու համար.

(գ) համապատասխան դեպքերում անհրաժեշտ առարկաների և անհրաժեշտ քանակությամբ նյութերի տրամադրումը՝ վերլուծության կամ քննության նպատակների համար.

(դ) աջակցությանը իրենց իրավասու մարմինների, հաստատությունների և ծառայությունների միջև արդյունավետ համակարգմանը և աշխատակիցների ու այլ փորձագետների փոխանակման խրախուսմանը, ներառյալ շահագրգիռ Մասնակից պետությունների կողմից երկկողմ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների կնքման պայմանը, աշխատակիցներին ըստ կապերի ուղարկելուն.

(ե) մյուս Մասնակից պետությունների հետ կազմակերպված հանցավոր խմբերի կողմից կիրառվող որոշակի միջոցների և մեթոդների մասին տեղեկության փոխանակմանը, ներառյալ, պատշաճ դեպքերում, երթուղիները, տրանսպորտի միջոցները, ինչպես նաև անձր հաստատող կեղծ փաստաթղթերի, փոփոխված կամ կեղծ փաստաթղթերը կամ իրենց գործունեությունը թաքցնելու այլ միջոցների օգտագործումը.

(գ) տեղեկության փոխանակմանը և, պատշաճ դեպքերում, սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործությունները ժամանակին բացահայտելու նպատակով կիրառվող վարչական և այլ միջոցների համակարգմանը:

2. Սույն Կոնվենցիայի գործնական կիրառման նպատակների համար Մասնակից պետությունները քննարկում են իրենց իրավապահ մարմինների միջև անմիջական համագործակցության մասին երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների կնքման, իսկ այն դեպքերում, երբ այդպիսի համաձայնագրերը և պայմանավորվածությունները արդեն գոյություն ունեն՝ դրանց փոփոխման հնարավորությունը: Շահագրգիռ Մասնակից պետությունների միջև այդպիսի համաձայնագրերի և պայմանավորվածությունների բացակայության դեպքում Մասնակիցները սույն Կոնվենցիան կարող են դիտել որպես իրավապահ մարմինների միջև փոխադարձ համագործակցության հիմք սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործությունների կապակցությամբ: Պատշաճ դեպքերում Մասնակից պետությունները լրիվ չափով օգտագործում են համաձայնագրերն ու պայմանավորվածությունները, այդ թվում՝ միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների մեխանիզմները, իրենց իրավապահ մարմինների միջև համագործակցությունն ընդլայնելու համար:

3. Մասնակից պետությունները ձգտում են իրենց հնարավորությունների սահմաններում համագործակցել՝ ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարվող անդրազգային կազմակերպված հանցագործություններին հակազդելու նպատակով:

Հոդված 28

Կազմակերպված հանցավորության բնույթի վերաբերյալ տեղեկություն հավաքելն ու վերլուծելը և այդպիսի տեղեկություն փոխանակելը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, խորհրդակցելով գիտահետազոտական շրջանակների հետ, ուսումնասիրում է իր տարածքում կազմակերպված հանցավորության բնագավառում միտումների, պայմանների, որոնցում գործում է կազմակերպված հանցավորությունը, վերլուծություն անցկացնելու, ինչպես նաև ներգրավված մասնագիտական խմբերի և օգտագործվող տեխնոլոգիաների ուսումնասիրության հնարավորությունը:

2. Մասնակից պետությունները քննարկում են կազմակերպված հանցավոր գործունեության մասին վերլուծական գիտելիքների ընդլայնման և միմյանց միջև դրանք նաև միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների միջոցով փոխանակման հնարավորությունը: Այդ նպատակով, պատշաճ դեպքերում, պետք է մշակվեն և օգտագործվեն ընդհանուր սահմանումներ, ստանդարտներ և մեթոդաբանություն:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ուսումնասիրում է կազմակերպված հանցավորության դեմ պայքարում իր քաղաքականության և գործնական միջոցների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև դրանց

արդյունավետության և գործնականության գնահատում կատարելու հնարավորությունը:

Հոդված 29

Կադրերի պատրաստումը և տեխնիկական օգնությունը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն անհրաժեշտ սահմաններում իրականացնում, մշակում կամ կատարելագործում է իրավապահ մարմինների աշխատակազմի, այդ թվում՝ դատախազության աշխատակիցների, քննիչների և մաքսային մարմինների աշխատակիցների, ինչպես նաև այլ աշխատակիցների պատրաստման որոշակի ծրագրեր, ովքեր պատասխանատու են սույն Կոնվենցիայով ընդգրկված հանցագործությունների նախագոյաշացման, բացահայտման և կանխարգելման համար: Այդպիսի ծրագրերը կարող են ներառել աշխատակիցների գործուղումները և նրանց փոխանակումները: Այդպիսի ծրագրերը վերաբերում են, մասնավորապես և այն չափով, որքանով դա թույլատրվում է ներքին օրենսդրությամբ, հետևյալ հարցերին.

(ա) սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործությունների կանխարգելմանը, բացահայտմանը և կանխման ժամանակ օգտագործվող մեթոդներին.

(բ) սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործություններին առնչություն ունենալու մեջ կասկածվող անձանց կողմից օգտագործվող երթուղիներին և միջոցներին, այդ թվում՝ նաև տարանցման պետություններում, ինչպես նաև համապատասխան պատասխան միջոցներին.

(գ) մաքսանենգության առարկաների տեղափոխմանը հետևելուն.

(դ) հանցագործությունից ստացված եկամուտների, գույքի, սարքավորումների կամ հանցագործության կատարման այլ միջոցների տեղափոխմանը և այդպիսի եկամուտները, գույքը, սարքավորումները կամ հանցագործության մեթոդները բացահայտելուն և դրանց հետևելուն, ինչպես նաև այն մեթոդներին, որոնք օգտագործվում են դրամական միջոցների լվացման և այլ ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարում.

(ե) ապացույցներ հավաքելուն.

(զ) ազատ առևտրի գոտիներում և ազատ նավահանգիստներում վերահսկողության եղանակներին.

(է) ժամանակակից սարքավորմանը և մեթոդներին, որոնք օգտագործվում են իրավապահ մարմինների աշխատանքում, ներառյալ էլեկտրոնային դիտարկումը, վերահսկելի մատակարարումները և գործակալական գործառնությունները.

(ը) համակարգիչների, հեռահաղորդակցության ցանցերի և ժամանակակից տեխնոլոգիայի այլ տեսակների օգտագործմամբ կատարվող անդրազգային

կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարում օգտագործվող մեթոդներին, և

(թ) տուժողների և վկաների պաշտպանության ժամանակ օգտագործվող մեթոդներին:

2. Մասնակից պետությունները միմյանց աջակցություն են ցույց տալիս հետազոտման և կադրերի պատրաստման ծրագրերի պլանավորման և իրականացման գործում, որոնք կոչված են ապահովելու սույն հոդվածի 1-ին կետում նշված բնագավառներում հատուկ գիտելիքների փոխանակումը և, այդ նպատակով, պատշաճ դեպքերում, օգտագործում են նաև տարածաշրջանային և միջազգային խորհրդատուները և սեմինարները՝ համագործակցությանն աջակցելու և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հիմնախնդիրների, այդ թվում՝ տարանցման պետությունների հատուկ հիմնախնդիրների և պահանջների քննարկման համար:

3. Մասնակից պետությունները աջակցում են կադրերի պատրաստման և տեխնիկական օգնություն ցույց տալու գործում, որոնք պետք է նպաստեն հանձնմանը և փոխադարձ իրավական օգնությանը: Կադրերի պատրաստման գործում այդպիսի օգնությունը և տեխնիկական օգնությունը կարող են ներառել օտար լեզուների ուսուցումը, գործուղումը և կենտրոնական մարմինների կամ համապատասխան գործառույթներ կատարող հիմնարկների աշխատակիցների փոխանակումը:

4. Գործող երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների դեպքում Մասնակից պետությունները, որքանով դա անհրաժեշտ է, ակտիվացնում են միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների և այլ երկկողմ ու բազմակողմ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների շրջանակներում գործնական և ուսումնական միջոցառումների արդյունավետության առավելագույն բարձրացմանն ուղղված ջանքերը:

Հոդված 30

Այլ միջոցներ. սույն Կոնվենցիայի իրականացումը տնտեսական զարգացման և տեխնիկական օգնության միջոցով

1. Մասնակից պետությունները սույն Կոնվենցիայի լավագույն իրականացմանը նպաստող միջոցներ են ձեռնարկում, որքանով դա հնարավոր է, միջազգային համագործակցության միջոցով՝ հաշվի առնելով կազմակերպված հանցավորության բացասական հետևանքները հասարակության համար ընդհանրապես, այդ թվում՝ կայուն զարգացման համար:

2. Մասնակից պետությունները, որքանով դա հնարավոր է և միմյանց հետ, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցելով, որոշակի ջանքեր են ձեռնարկում հետևյալի համար.

(ա) զարգացող երկրների հետ տարբեր մակարդակներով իրենց համագործակցությունն ակտիվացնելու՝ անդրազգային կազմակերպված հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարում այդ երկրների հնարավորություններն ամրապնդելու նպատակով:

(բ) ֆինանսական և նյութական օգնությունն ընդլայնելու՝ զարգացող երկրների անդրազգային կազմակերպված հանցավորությանը արդյունավետ հակազդելու ջանքերին աջակցելու և սույն Կոնվենցիան հաջող իրականացնելու համար նրանց օգնություն ցույց տալու նպատակով:

(գ) զարգացող երկրներին և անցումային տնտեսություն ունեցող երկրներին տեխնիկական օգնություն ցույց տալու՝ սույն Կոնվենցիայի իրականացման կապակցությամբ նրանց պահանջմունքների բավարարմանն աջակցելու նպատակով: Դրա համար Մասնակից պետությունները ձգտում են պարբերական հիմունքներով բավարար կամավոր մուծումներ կատարել այն հաշվին, որը Միավորված ազգերի կազմակերպության կողմից ստեղծված ֆինանսավորման մեխանիզմների մեջ որոշակիորեն նախատեսված է այդ նպատակի համար: Մասնակից պետությունները, իրենց ներքին օրենսդրությանը և սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են նաև հատուկ քննարկել վերոհիշյալ հաշվին դրամական միջոցների որոշակի բաժնեմասի կամ հանցագործություններից ստացված այն եկամուտների կամ գույքի համապատասխան արժեքների փոխանցման հնարավորությունը, որոնք բռնագրավվել են սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

(դ) այլ պետություններին և ֆինանսական հիմնարկներին խրախուսելու և համոզելու, պատշաճ դեպքերում, միանալու նրանց այն ջանքերին, որոնք նախատեսված են սույն հոդվածին համապատասխան, այդ թվում՝ զարգացող երկրների համար կադրերի պատրաստման ծրագրերի և ժամանակակից սարքավորումների ավելի մեծ ծավալի ապահովման միջոցով՝ այն հաշվով, որ նրանց օգնեն հասնելու սույն Կոնվենցիայի նպատակներին:

3. Որքանով դա հնարավոր է, այդ միջոցները վնաս չեն պատճառում օտարերկրյա օգնության վերաբերյալ գոյություն ունեցող պարտավորություններին կամ ֆինանսական համագործակցության վերաբերյալ երկկողմ, տարածաշրջանային կամ միջազգային մակարդակով ֆինանսական այլ պայմանավորվածություններին:

4. Մասնակից պետությունները կարող են կնքել նյութատեխնիկական օգնության մասին երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ՝ նկատի ունենալով այն ֆինանսական պայմանավորվածությունները, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայով նախատեսված միջազգային համագործակցության արդյունավետությունն ապահովելու համար, ինչպես նաև անդրազգային կազմակերպված հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի համար:

Անդրազգային կազմակերպված հանցավորությունը կանխարգելելը

1. Մասնակից պետությունները ձգտում են մշակել և գնահատել ազգային նախագծերի արդյունավետությունը, ինչպես նաև բացահայտել և ներդնել պրակտիկայի և քաղաքականության այնպիսի լավագույն տեսակներ, որոնք ուղղված են անդրազգային կազմակերպված հանցավորության կանխարգելմանը:

2. Մասնակից պետությունները ձգտում են, իրենց ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, օրենսդրական, վարչական կամ այլ պատշաճ միջոցներ ձեռնարկելու միջոցով կազմակերպված հանցավոր խմբերի համար կրճատել հանցագործությունից ստացված եկամուտները օգտագործելիս օրինական շուկաներում գործելու գոյություն ունեցող կամ ապագա հնարավորությունները: Այդպիսի միջոցները պետք է կենտրոնանան հետևյալի վրա.

(ա) իրավապահ մարմինների կամ դատախազության մարմինների և համապատասխան մասնավոր կազմակերպությունների միջև, այդ թվում՝ տնտեսության տարբեր ոլորտների, համագործակցության ամրապնդմանը.

(բ) հանրային և համապատասխան մասնավոր կազմակերպությունների աշխատանքներում բարեխղճություն ապահովելու համար նախատեսված ստանդարտների և ընթացակարգերի, ինչպես նաև համապատասխան մասնագիտությունների ներկայացուցիչների, մասնավորապես, փաստաբանների, նոտարների, հարկման հարցերով խորհրդատուների և հաշվապահների համար վարքագծի կանոնների մշակմանն աջակցելուն.

(գ) հանրային մարմինների կողմից անցկացվող առևտրի ընթացակարգերը և առևտրային գործունեություն իրականացնելու համար հանրային մարմինների կողմից տրվող վարկերը և լիցենզիաները կազմակերպված հանցավոր խմբերի կողմից չարաշահումները կանխարգելելուն.

(դ) իրավաբանական անձանց կողմից կազմակերպված հանցավոր խմբերի չարաշահումները կանխարգելելուն. այդպիսի միջոցները կարող են ներառել.

(i) ֆիզիկական և իրավաբանական այն անձանց հրապարակային գրանցամատյանի ստեղծումը, որոնք մասնակցում են իրավաբանական անձանց հիմնադրմանը, դրանց կառավարմանը և ֆինանսավորմանը.

(ii) սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործությունների համար դատապարտված անձանց դատարանի որոշմամբ կամ այլ պատշաճ միջոցների օգնությամբ ողջամիտ ժամանակահատվածով իրենց իրավասության սահմաններում գրանցված իրավաբանական անձանց ղեկավարների պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելու հնարավորության ստեղծումը.

(iii) իրավաբանական անձանց ղեկավարների պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկված անձանց ազգային գրանցամատյանի ստեղծումը, և

(iv) այլ Մասնակից պետությունների իրավասու մարմինների հետ սույն կետի 'դ' (i) և (iii) ենթակետերում նշված գրանցամատյաններում պարունակվող տեղեկության փոխանակումը:

3. Մասնակից պետությունները ձգտում են աջակցել սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործությունների համար դատապարտված անձանց վերաինտեգրմանը հասարակության մեջ:

4. Մասնակից պետությունները ձգտում են պարբերաբար անցկացնել համապատասխան հարցերով գոյություն ունեցող իրավական փաստաթղթերի և վարչական պրակտիկայի գնահատում՝ կազմակերպված հանցավոր խմբերի կողմից չարաշահումների տեսակետից նրանց խոցելիությունը բացահայտելու նպատակով:

5. Մասնակից պետությունները ձգտում են աջակցել հասարակության կողմից անդրազգային կազմակերպված հանցավորության գոյության փաստի, պատճառների և վտանգավոր բնույթի, ինչպես նաև դրա կողմից ստեղծվող սպառնալիքների ըմբռնման խորացմանը:

6. Յուրաքանչյուր Մասնակից պետություն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հայտնում է այն մարմնի կամ մարմինների անվանումը և հասցեն, որոնք մյուս Մասնակից պետություններին կարող են օգնություն ցույց տալ անդրազգային կազմակերպված հանցավորության կանխարգելման միջոցների մշակման գործում:

7. Մասնակից պետությունները, պատշաճ դեպքերում, համագործակցում են միմյանց և համապատասխան միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ սույն հոդվածում նշված միջոցների մշակման և իրականացման գործում: Դա ներառում է մասնակցությունը այն միջազգային նախագծերին, որոնք ուղղված են անդրազգային կազմակերպված հանցավորության կանխարգելմանը, օրինակ՝ այն պայմանների բարելավման միջոցով, որոնք անդրազգային կազմակերպված հանցավոր խմբերի գործունեության տեսանկյունից որոշում են անբարենպաստ սոցիալական վիճակում գտնվող բնակչության խմբերի խոցելիությունը:

Հոդված 32

Կոնվենցիայի մասնակիցների խորհրդաժողովը

1. Սույնով ստեղծվում է Կոնվենցիայի Մասնակիցների խորհրդաժողով՝ Մասնակից պետությունների անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հնարավորությունների ընդլայնման, ինչպես նաև սույն Կոնվենցիայի իրականացմանն աջակցելու համար և դրա իրականացման ընթացքը լուսաբանելու նպատակով:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Մասնակիցների խորհրդաժողովը գումարում է ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո: Մասնակիցների խորհրդաժողովը ընդունում է ընթացակարգի

կանոնները և սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերում նշված գործունեության տեսակները կարգավորող կանոնները (այդ թվում՝ գործունեության այդ տեսակների իրականացման ժամանակ կրած ծախսերի վճարմանը վերաբերող կանոնները):

3. Մասնակիցների խորհրդատողովը համաձայնեցնում է սույն հոդվածի 1-ին կետում նշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ մեխանիզմները՝ ներառյալ հետևյալը.

(ա) Մասնակից պետությունների գործունեությանն աջակցելը, սույն Կոնվենցիայի 29-րդ, 30-րդ և 31-րդ հոդվածների համաձայն, այդ թվում՝ կամավոր մուծումների հավաքագրմանն աջակցելու միջոցով.

(բ) Մասնակից պետությունների միջև անդրազգային կազմակերպված հանցավորության և այդ բնագավառում միտումների, ինչպես նաև դրա դեմ պայքարի արդյունավետ մեթոդների վերաբերյալ տեղեկության փոխանակմանն աջակցելը.

(գ) համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցելը.

(դ) սույն Կոնվենցիայի իրականացման մասին հարցը պարբերաբար քննարկելը.

(ե) սույն Կոնվենցիայի կատարելագործմանը և դրա իրականացմանը վերաբերող հանձնարարականներ ընդունելը:

4. Սույն հոդվածի 3՝ դ՝ և ե՝ կետերի նպատակների համար Մասնակիցների խորհրդատողովն անհրաժեշտ տեղեկություններ է ստանում, որոնք Մասնակից պետությունների կողմից ընդունվել են սույն Կոնվենցիայի իրականացման համար, և այն դժվարությունների մասին, որոնց նրանք այդ ընթացքում հանդիպել են իրենց կողմից տրամադրված տեղեկության հիման վրա և լուսաբանման այնպիսի լրացուցիչ մեխանիզմների միջոցով, ինչպիսիք կարող են ստեղծվել Մասնակիցների խորհրդատողովի կողմից:

5. Յուրաքանչյուր Մասնակից պետություն Մասնակիցների խորհրդատողովին տեղեկություն է ներկայացնում իր ծրագրերի, պլանների և պրակտիկայի, ինչպես նաև սույն Կոնվենցիայի իրականացմանն ուղղված օրենսդրական և վարչական միջոցների մասին, ինչպես դա պահանջում է Մասնակիցների խորհրդատողովը:

Հոդված 33

Քարտուղարությունը

1. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը ապահովում է Կոնվենցիայի Մասնակիցների խորհրդատողովի քարտուղարական անհրաժեշտ սպասարկումը:

1.Քարտուղարությունը՝

(ա) Մասնակիցների խորհրդատուական օգնություն է ցույց տալիս այն գործունեության իրականացման ժամանակ, որի մասին խոսվում է սույն Կոնվենցիայի 32-րդ հոդվածում, ինչպես նաև կազմակերպում է Մասնակիցների խորհրդատուական նստաշրջանները և դրանք ապահովում է անհրաժեշտ սպասարկմամբ:

(բ) ըստ խնդրանքի՝ օգնություն է ցույց տալիս Մասնակից պետություններին՝ Մասնակիցների խորհրդատուական տեղեկություն տրամադրելու գործում, ինչպես նախատեսված է սույն Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 5-րդ կետում, և

(գ) անհրաժեշտ համակարգում է ապահովում համապատասխան այլ միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների քարտուղարությունների հետ:

Հոդված 34

Կոնվենցիայի իրականացումը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում, ներառյալ օրենսդրական և վարչական միջոցները, սույն Կոնվենցիայի համաձայն իր պարտավորությունների իրականացումն ապահովելու համար:

2. Հանցագործությունները, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 23-րդ հոդվածներին համապատասխան, յուրաքանչյուր Մասնակից պետության ներքին օրենսդրությամբ որպես այդպիսին են ճանաչվում՝ անկախ անդրազգային բնույթի տարրերից կամ կազմակերպված հանցավոր խմբին առնչությունից, ինչպես դա նշված է սույն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետում, բացի այն դեպքերից, երբ սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն պահանջվում է կազմակերպված հանցավոր խմբին առնչության տարրի առկայությունը:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն անդրազգային կազմակերպված հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի համար կարող է ձեռնարկել ավելի խիստ կամ դաժան միջոցներ, քան սույն Կոնվենցիայով նախատեսված միջոցներն են:

Հոդված 35

Վեճերի կարգավորումը

1. Մասնակից պետությունները ձգտում են սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ վեճերը կարգավորել բանակցությունների միջոցով:

2. Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ երկու կամ ավելի Մասնակից պետությունների միջև ցանկացած վեճ, որը չի կարող ողջամիտ ժամկետում կարգավորվել բանակցությունների միջոցով, այդ Մասնակից պետություններից որևէ մեկի խնդրանքով փոխանցվում է արբիտրաժային քննության: Եթե արբիտրաժին խնդրանքով դիմելուց վեց ամսվա ընթացքում այդ Մասնակից պետությունները չկարողանան պայմանավորվել դրա կազմակերպման մասին, ապա

այդ Մասնակից պետություններից յուրաքանչյուրը կարող է վեճը փոխանցել Միջազգային դատարան՝ դատարանի Կանոնադրությանը համապատասխան դիմում ներկայացնելով:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն կարող է սույն Կոնվենցիան ստորագրելիս, վավերացնելիս, ընդունելիս կամ հաստատելիս կամ դրան միանալիս հայտարարել այն մասին, որ ինքը իրեն կապված չի համարում սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներով: Մյուս Մասնակից պետությունները կապված չեն սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներով՝ այդպիսի վերապահում արած ցանկացած Մասնակից պետության նկատմամբ:

4. Սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան վերապահում արած ցանկացած Մասնակից պետություն կարող է ցանկացած ժամանակ հանել այդ վերապահումը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ծանուցագիր ուղարկելու միջոցով:

Հոդված 36

Ստորագրելը, վավերացնելը, ընդունելը,

հաստատելը և միանալը

1. Սույն Կոնվենցիան ստորագրման համար բաց է բոլոր պետությունների կողմից 2000 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 15-ը՝ Պալերմոյում /Իտալիա/, և այնուհետ՝ Նյու Յորքում՝ Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հիմնարկներում, մինչև 2002 թվականի դեկտեմբերի 12-ը:

2. Սույն Կոնվենցիան ստորագրման համար բաց է նաև տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպությունների կողմից՝ պայմանով, որ այդպիսի կազմակերպության անդամ պետություններից առնվազն մեկը սույն հոդվածի 1-ին կետի համապատասխան ստորագրել է սույն Կոնվենցիան:

3. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերագրերը կամ ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպությունն իր վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը կարող է ի պահ հանձնել, եթե նրա անդամ պետություններից առնվազն մեկը նույն կերպ է վարվել: Այդ վավերագրում կամ ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթում այդպիսի կազմակերպությունը հայտարարում է իր իրավասության ոլորտի մասին այն հարցերի առնչությամբ, որոնք կարգավորվում են սույն Կոնվենցիայով: Այդպիսի կազմակերպությունը ավանդապահին հայտնում է նաև իր իրավասության ոլորտի ցանկացած համապատասխան փոփոխության մասին:

4. Սույն Կոնվենցիան միանալու համար բաց է ցանկացած պետության կամ տնտեսական ինտեգրացման ցանկացած տարածաշրջանային կազմակերպության

կողմից, որի անդամ պետություններից առնվազն մեկը սույն Կոնվենցիայի Մասնակից է համարվում: Միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Միանալիս տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպությունը հայտարարում է իր իրավասության ոլորտի մասին այն հարցերի վերաբերյալ, որոնք կարգավորվում են սույն Կոնվենցիայով: Այդպիսի կազմակերպությունը ավանդապահին հայտնում է նաև իր իրավասության ոլորտի ցանկացած համապատասխան փոփոխության մասին:

Հոդված 37

Փոխկապվածությունը Արձանագրությունների հետ

1. Սույն Կոնվենցիան կարող է լրացվել մեկ կամ մի քանի արձանագրություններով:
2. Արձանագրության մասնակից դառնալու համար պետությունը կամ տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպությունը պետք է լինի նաև սույն Կոնվենցիայի Մասնակից:
3. Սույն Կոնվենցիայի Մասնակից պետությունը կապված չէ արձանագրությամբ, եթե միայն նա չի դառնում արձանագրության մասնակից՝ նրա դրույթներին համապատասխան:
4. Սույն Կոնվենցիայի ցանկացած արձանագրություն մեկնաբանվում է սույն Կոնվենցիայի հետ համատեղ՝ հաշվի առնելով այդ արձանագրության նպատակը:

Հոդված 38

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում քառասուներորդ վավերագիրը կամ ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվից հետո իննսուներորդ օրը: Սույն կետի նպատակի համար ցանկացած այդպիսի վավերագիր կամ փաստաթուղթ, որոնք ի պահ են հանձնվել տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպության կողմից, չեն դիտվում որպես լրացուցիչ այն վավերագրերին կամ փաստաթղթերին, որոնք ի պահ են հանձնվել այդպիսի կազմակերպության անդամ պետությունների կողմից:
2. Յուրաքանչյուր պետության կամ տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպության համար, որոնք վավերացնում, ընդունում կամ հաստատում են սույն Կոնվենցիան կամ միանում են դրան քառասուներորդ վավերագիրը կամ այդպիսի գործողության մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդպիսի պետության կամ կազմակերպության կողմից համապատասխան վավերագիրը կամ փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվից հետո երեսուներորդ օրը:

Հոդված 39

Ուղղումներ

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հինգ տարի լրանալուց հետո Մասնակից պետությունը կարող է ուղղում առաջարկել և այն ուղարկել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այնուհետ առաջարկվող ուղղումը փոխանցում է Մասնակից պետություններին և Կոնվենցիայի Մասնակիցների խորհրդաժողովին՝ այդ առաջարկության քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով: Մասնակիցների խորհրդաժողովը բոլոր ջանքերը գործադրում է յուրաքանչյուր ուղղման վերաբերյալ համաձայնության գալու համար: Եթե համաձայնության գալու բոլոր ջանքերն սպառվել են և համաձայնություն ձեռք չի բերվել, ապա, որպես ծայրահեղ միջոց, ուղղումն ընդունելու համար պահանջվում է այն Մասնակից պետությունների ձայների երկու երրորդի մեծամասնությունը, որոնք Մասնակիցների խորհրդաժողովի նիստին ներկա են և մասնակցում են քվեարկությանը:

2. Տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպություններն իրենց իրավասության բնագավառի մեջ մտնող հարցերով ձայնի իրենց իրավունքն իրականացնում են սույն հոդվածի համաձայն՝ ունենալով ձայների այնքան քանակ, որը հավասար է իրենց այն անդամ պետությունների քանակին, որոնք սույն Կոնվենցիայի Մասնակիցներ են համարվում: Այդպիսի կազմակերպություններն իրենց ձայնի իրավունքը չեն իրականացնում, եթե դրանց անդամ պետությունները իրականացնում են իրենց ձայնի իրավունքը և ընդհակառակը:

3. Սույն հոդվածի 1-ին կետի համապատասխան ընդունված ուղղումը ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման Մասնակից պետությունների կողմից:

4. Սույն հոդվածի 1-ին կետի համապատասխան ընդունված ուղղումը Մասնակից պետության նկատմամբ ուժի մեջ է մտնում նրա կողմից այդպիսի ուղղման վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու ամսաթվից հետո իննսուներորդ օրը:

5. Երբ ուղղումն ուժի մեջ է մտնում, այն պարտադիր է դառնում այն Մասնակից պետությունների համար, որոնք դրանով կապված լինելու համաձայնություն են արտահայտել: Մյուս Մասնակից պետությունները շարունակում են կապված լինել սույն Կոնվենցիայի դրույթներով և նրանց կողմից նախկինում վավերացված, ընդունված կամ հաստատված ցանկացած ուղղումով:

Հոդված 40

Գործողությունը դադարեցնելը

1. Մասնակից պետությունը կարող է դադարեցնել սույն Կոնվենցիայի գործողությունը Միավորված ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցագիր ուղարկելու միջոցով: Գործողության այդպիսի դադարեցումն

ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցագիրն ստանալու ամսաթվից մեկ տարին լրանալուց հետո:

2. Տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպությունը դադարում է սույն Կոնվենցիային Մասնակից լինելուց, երբ նրա բոլոր անդամ պետությունները դադարեցրել են սույն Կոնվենցիայի գործողությունը:

3. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ սույն Կոնվենցիայի գործողության դադարեցումը հանգեցնում է նրա ցանկացած արձանագրության գործողության դադարեցմանը:

Հոդված 41

Ավանդապահը և լեզուները

1. Սույն Կոնվենցիայի ավանդապահ է նշանակվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը:

2. Սույն Կոնվենցիայի բնօրինակը, որի անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարապես նույնական են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչները, պատշաճորեն դրա համար լիազորված լինելով իրենց կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Նյու Յորք քաղաքում 2000 թվականի նոյեմբերի 15-ին:

***Կոնվենցիան Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է հայտարարությամբ.**

«Հոդված 5

Համաձայն 2000 թվականի նոյեմբերի 15-ին Նյու Յորքում ընդունված Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Քրեական օրենսգիրքը (մասնավորապես օրենսգրքի 7-րդ գլխի 41-րդ հոդվածը) ներառում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի ա/i/ ենթակետում նախատեսված կազմակերպված հանցավոր խմբերի մասնակցությամբ բոլոր լուրջ հանցագործությունները:

Հոդված 16

Համաձայն Կոնվենցիայի 16-րդ հոդվածի 5-րդ կետի, Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ նա Կոնվենցիան կհամարի իրավական հիմք՝ Կոնվենցիայի մյուս Մասնակից պետությունների հետ հանձնման հարցերով համագործակցելու համար:

Այնուամենայնիվ, միաժամանակ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ կկիրառի Կոնվենցիան 1957 թվականի դեկտեմբերի 13-ին Փարիզում ստորագրված Հանձնման մասին եվրոպական կոնվենցիայի մասնակից պետությունների հետ հարաբերություններում, նախատեսելով, որ Կոնվենցիան լրացնում է և օժանդակում է Հանձնման մասին եվրոպական կոնվենցիայի դրույթների կիրառմանը:

Հոդված 18

Համաձայն Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 13-րդ կետի, Հայաստանի Հանրապետությունը փոխադարձ իրավական օգնության մասին խնդրանքները ստանալու համար նշանակում է հետևյալ կենտրոնական մարմիններին.

ա) նախաքննական փուլում գտնվող գործերի համար՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն,

բ) դատաքննության կամ դատական վճիռների կատարման փուլում գտնվող գործերի համար՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

Համաձայն Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 14-րդ կետի, Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ ընդունելի լեզուներն են հայերենը, անգլերենը կամ ռուսերենը»:

****Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2003 թվականի սեպտեմբերի 29-ից:**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Կոնվենցիան լրացնող ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ

ՆԱԽԱԲԱՆ

Սույն Արձանագրության Մասնակից պետությունները,

հայտարարելով, որ ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներմուծման կանխարգելման վերաբերյալ արդյունավետ միջոցներ ձեռնարկելու և

դրա դեմ պայքարի համար անհրաժեշտ է համընդգրկուն միջազգային մոտեցում, ներառյալ համագործակցությունը, տեղեկության փոխանակումը և այլ պատշաճ միջոցները, այդ թվում՝ ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով սոցիալ-տնտեսական միջոցները,

վկայակոչելով Գլխավոր ասամբլեայի 1999 թվականի դեկտեմբերի 22-ի հմ. 54/212 բանաձևը, որում Ասամբլեան հետևողականորեն կոչ է արել անդամ պետություններին և Միավորված ազգերի կազմակերպության համակարգին՝ ամրապնդել միջազգային համագործակցությունը միջազգային միգրացիայի և զարգացման բնագավառներում՝ դրա արմատական պատճառների վերացմանն աջակցելու նպատակով, հատկապես՝ այնպիսիներին, որոնք կապված են չքավորության և միջազգային միգրացիայից օգուտների առավելագույն ավելացմանը նրանց համար, ում դա վերաբերում է, և միջտարածաշրջանային, տարածաշրջանային և ենթատարածաշրջանային մեխանիզմներին համապատասխան դեպքերում հանձնարարել է շարունակել զբաղվել միգրացիայի և զարգացման վերաբերյալ հարցի քննարկումով,

համոզված լինելով միգրանտներին մարդասիրական վերաբերմունք և նրանց իրավունքների լրիվ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտության մեջ,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ չնայած այն աշխատանքին, որ կատարվում են այլ միջազգային համաժողովներում, չկա համապարփակ փաստաթուղթ, որում կշռափվեն միգրանտների անօրինական ներմուծման կողմերը և դրա հետ կապված այլ հարցերը,

մտահոգված լինելով կազմակերպված հանցավոր խմբերի գործունեության զգալի ընդլայնումով՝ կապված միգրանտների անօրինական ներմուծման և դրա հետ կապված այլ հանցավոր գործունեության հետ, որը նշված է սույն Արձանագրության մեջ, որը զգալի վնաս է պատճառում համապատասխան պետություններին,

մտահոգված լինելով նաև նրանով, որ միգրանտների անօրինական ներմուծումը կարող է սպառնալիք ստեղծել դրա մեջ ներգրավված միգրանտների կյանքի և անվտանգության համար,

վկայակոչելով Գլխավոր ասամբլեայի 1998 թվականի դեկտեմբերի 9-ի հմ. 53/111 բանաձևը, որում Ասամբլեան որոշել է ստեղծել բաց կազմով հատուկ միջկառավարական կոմիտե՝ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ համընդգրկուն միջազգային կոնվենցիա մշակելու և դրա մշակման մասին հարցը քննարկելու, մասնավորապես՝ միգրանտների անօրինական ներմուծման և փոխադրման դեմ պայքարի միջազգային փաստաթղթի մշակումը, այդ թվում՝ ծովով,

համոզված լինելով, որ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված ազգերի կազմակերպության Կոնվենցիան ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներմուծման դեմ միջազգային փաստաթղթով լրացնելը նպաստելու է այդպիսի հանցագործությունների կանխմանը և դրանց դեմ պայքարին,

համաձայնեցին հետևյալի մասին.

1. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

Կապը Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Կոնվենցիայի հետ

1. Սույն Արձանագրությունը լրացնում է Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Կոնվենցիան: Այն մեկնաբանվում է Կոնվենցիայի հետ համատեղ:
2. Կոնվենցիայի դրույթները սույն Արձանագրության նկատմամբ կիրառվում են պարտադիր, եթե դրանում այլ բան նախատեսված չէ:
3. Հանցագործությունները, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Արձանագրության 6-րդ հոդվածի համապատասխան, դիտվում են որպես հանցագործություն, որոնք այդպիսին են ճանաչվել Կոնվենցիային համապատասխան:

Հոդված 2

Նպատակը

Սույն Արձանագրության նպատակը կայանում է միգրանտների անօրինական մուտքի կանխարգելման և դրա դեմ պայքարի մեջ, ինչպես նաև այդ նպատակներին հասնելու համար Մասնակից պետությունների միջև համագործակցությունը խրախուսելու մեջ՝ անօրինական ներմուծված միգրանտների իրավունքների պաշտպանումով:

Հոդված 3

Տերմինները

Սույն Արձանագրության նպատակների համար.

(ա) «միգրանտների անօրինական ներմուծում» նշանակում է՝ որևէ Մասնակից պետություն որևէ անձի, որը չի հանդիսանում նրա քաղաքացին կամ մշտապես չի բնակվում նրա տարածքում, անօրինական ներմուծման ապահովում՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ ֆինանսական կամ այլ նյութական շահ ստանալու նպատակով.

(բ) «անօրինական մուտք» նշանակում է՝ սահմանների հատումը առանց ընդունող պետություն օրինական մուտքի համար անհրաժեշտ պահանջների պահպանման.

(գ) «մուտքի/ելքի կամ անձը հաստատող կեղծ փաստաթուղթ» նշանակում է՝ մուտքի/ելքի կամ անձը հաստատող ցանկացած փաստաթուղթ, որը.

(i) ցանկացած անձի կամ հիմնարկի կողմից կեղծվել կամ որևէ նյութական ձևով փոփոխվել է, բացի նրանցից, որոնք օրինական կարգով լիազորված են պետության անունից պատրաստել կամ տալ մուտքի/ելքի կամ անձը հաստատող փաստաթուղթ, կամ

(ii) տրվել է ոչ պատշաճ ձևով կամ ստացվել է ոչ ճիշտ տվյալներ ներկայացնելու, կաշառակերության կամ հարկադրանքի օգնությամբ կամ որևէ այլ անօրինական ձևով, կամ

(iii) օգտագործվում է ոչ թե օրինական տիրոջ, այլ ուրիշ անձի կողմից,

(դ) «նավ» նշանակում է՝ ցանկացած տեսակի լողացող միջոցներ, ներառյալ ոչ ջրատար տեսակի նավերը և հիդրոինքնաթիռները, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես ջրի վրայով փոխադրման միջոց, բացառությամբ ռազմանավերի, օժանդակ ռազմածովային նավերի կամ այլ նավերի, որոնք պատկանում են պետությանը կամ շահագործվում են նրա կողմից և համապատասխան պահին օգտագործվում են միայն պետական ոչ առևտրային ծառայության մեջ:

Հոդված 4

Կիրառման ոլորտը

Սույն Արձանագրությունը, եթե դրանում այլ բան նշված չէ, կիրառվում է այն հանցագործությունների կապակցությամբ կանխարգելման, քննության և քրեական հետապնդման նկատմամբ, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Արձանագրության 6-րդ հոդվածին համապատասխան, եթե այդ հանցագործությունները կրում են անդրազգային բնույթ և կատարվել են կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ, ինչպես նաև այն անձանց իրավունքների պաշտպանության նկատմամբ, որոնք այդպիսի հանցագործությունների օբյեկտ են դարձել:

Հոդված 5

Միզրանտների քրեական հետապնդումը

Սույն Արձանագրությունը չի կիրառվում միզրանտների քրեական հետապնդման համար սոսկ այն հանգամանքի ուժով, որ նրանք սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ են դարձել:

Հոդված 6

Քրեականացումը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ձեռնարկում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել այն հաշվով, որ քրեորեն պատժելի ճանաչվեն հետևյալ արարքները, երբ դրանք կատարվում են դիտավորությամբ և

ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսական կամ այլ նյութական շահ ստանալու նպատակով.

(ա) միգրանտների անօրինական ներմուծումը.

(բ) երբ դրանք կատարվում են միգրանտների անօրինական ներմուծման համար պայմաններ ստեղծելու նպատակով.

(i) մուտքի/ելքի կամ անձը հաստատող կեղծ փաստաթուղթ պատրաստելը.

(ii) այդպիսի փաստաթուղթ ձեռք բերելը կամ տրամադրելը կամ այն տիրապետելը.

(գ) որևէ անձի հետապնդելը, որը համապատասխան պետության քաղաքացի չի համարվում կամ նրա տարածքում մշտապես չի բնակվում, այդ պետությունում առանց դրանում օրինական գտնվելու համար անհրաժեշտ պահանջների պահպանության, գտնվելու հնարավորությունը՝ սույն կետի «բ» ենթակետում նշված միջոցների կամ ցանկացած այլ անօրինական միջոցի օգտագործման միջոցով:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ձեռնարկում է նաև այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել այն հաշվով, որ քրեորեն պատժելի ճանաչվեն հետևյալ արարքները.

(ա) իր իրավական համակարգի հիմնական սկզբունքների պահպանման պայմանով՝ որևէ հանցագործություն կատարելու փորձը, որն այդպիսին է ճանաչվել սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան.

(բ) որպես հանցակից մասնակցությունը որևէ հանցագործության իրականացմանը, որն այդպիսին է ճանաչվել սույն հոդվածի 1 (ա), (բ) (i) կամ (գ) կետի համապատասխան և իր իրավական համակարգի հիմնական սկզբունքների պահպանման պայմանով՝ որպես հանցակից մասնակցությունը որևէ հանցագործության իրականացմանը, որն այդպիսին է ճանաչվել սույն հոդվածի 1 (բ) (ii) կետի համապատասխան.

(գ) այլ անձանց կազմակերպելը կամ ղեկավարելը՝ որևէ հանցագործության կատարման նպատակով, որն այդպիսին է ճանաչվել սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ձեռնարկում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել, որպեսզի ծանրացնող հանգամանքներ ճանաչվեն այն հանցագործությունները, որոնք որպես այդպիսին են ճանաչվել սույն հոդվածի 1 (ա), (բ) (i) և (գ) կետերին համապատասխան և իրենց իրավական համակարգի հիմնական սկզբունքների պահպանման պայմանով՝ հանցագործությունները, որոնք որպես այդպիսին են ճանաչվել սույն հոդվածի 2 (բ) և (գ) կետերին համապատասխան,

(ա) որոնք համապատասխան միգրանտների կյանքը կամ անվտանգությունը վտանգի տակ են դնում կամ կարող են դնել, կամ

(բ) որոնք կապված են այդպիսի միգրանտների հետ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հետ, այդ թվում՝ շահագործման նպատակով:

4. Ոչինչ սույն Արձանագրության մեջ չի խոչընդոտում Մասնակից պետությանը միջոցներ ձեռնարկելու որևէ անձի նկատմամբ, որի արարքը քրեորեն պատժելի է համարվում նրա ներքին օրենսդրության համաձայն:

2. Միգրանտների անօրինական մուտքը ծովով

Հոդված 7

Համագործակցությունը

Մասնակից պետությունները առավելագույն հնարավոր չափով համագործակցում են միգրանտների՝ ծովով անօրինական ներմուծումը նախազգուշացնելու և կանխարգելելու նպատակով՝ միջազգային ծովային իրավունքին համապատասխան:

Հոդված 8

Ծովով միգրանտների անօրինական ներմուծմանը հակազդելու միջոցները

1. Մասնակից պետությունը, որը ողջամիտ հիմքեր ունի կասկածելու, որ այն նավը, որ կրում է իր դրոշը կամ հայտարարում է այն մասին, որ այն գրանցված է այդ պետությունում կամ ազգություն չունի կամ էլ թեև օտարերկրյա դրոշ է կրում կամ հրաժարվում է դրոշը ցույց տալ, իրականում ունի այդ Մասնակից պետության ազգությունը, մասնակցում է ծովով միգրանտների անօրինական ներմուծմանը, կարող է հայցել մյուս Մասնակից պետությունների օգնությունը՝ տվյալ նավը այդ նպատակով օգտագործելը կանխարգելելու գործում: Մասնակից պետությունները, որոնց ուղղված է նման հարցումը, այդպիսի օգնությունը տրամադրում են այն չափով, որքանով առկա միջոցների շրջանակներում դա հնարավոր է:

2. Մասնակից պետությունը, որը ողջամիտ հիմքեր ունի կասկածելու, որ նավը, որը, միջազգային իրավունքին համապատասխան, նավարկության ազատություն է իրականացնում և կրում է այլ Մասնակից պետության դրոշը, կամ այդպիսի պետությունում գրանցման նշաններ կրող նավը մասնակցում է ծովով միգրանտների անօրինական ներմուծմանը, կարող է այդ մասին ծանուցել դրոշի պետությանը, պահանջել գրանցման հաստատումը և հաստատման դեպքում խնդրել դրոշի պետության թույլտվությունը՝ այդ նավի նկատմամբ պատշաճ միջոցներ ձեռնարկելու համար: Դրոշի պետությունը կարող է հայցող պետությանը թույլ տալ, մասնավորապես՝

(ա) բարձրանալ այդ նավը.

(բ)կատարել այդ նավի զննում, և

(գ)այդ նավի՝ ծովով միգրանտների անօրինական ներմուծմանը մասնակցելու ապացույցներ հայտնաբերելու դեպքում պատշաճ միջոցներ ձեռնարկել այդ նավի, ինչպես նաև նրա մեջ գտնվող անձանց և բեռի նկատմամբ՝ դրոշի պետության կողմից թույլատրված կարգով:

3. Մասնակից պետությունը, որը սույն հոդվածի 2-րդ կետի համապատասխան իրականացնում է ցանկացած միջոց, արդյունքների մասին անհապաղ տեղեկացնում է շահագրգիռ դրոշի պետությանը:

4. Մասնակից պետությունը անհապաղ պատասխանում է մյուս Մասնակից պետությունից ստացված հարցմանը, որպեսզի պարզի՝ այդ պետությունում իր գրանցման մասին հայտարարող կամ նրա դրոշը կրող նավն ունի՞ արդյոք դրա իրավունքը, ինչպես նաև պատասխանում է այն թույլտվության վերաբերյալ հարցմանը, որն արվել է սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

5. Դրոշի պետությունը, սույն Արձանագրության 7-րդ հոդվածի համաձայն, կարող է իր թույլտվությունը ուղեկցել այնպիսի պայմաններով, որոնք պետք է համաձայնեցվեն նրա և հայցող պետության միջև, այդ թվում՝ այն պայմանների, որոնք վերաբերում են պատասխանատվությանը և այն արդյունավետ միջոցների ծավալին, որոնք պետք է ընդունվեն: Մասնակից պետությունը առանց դրոշի պետության ուղղակի համաձայնության լրացուցիչ միջոցներ չի ձեռնարկում, բացառությամբ այնպիսիների, որոնք անհրաժեշտ են մարդկանց կյանքի համար անմիջական վտանգը վերացնելու համար, կամ որոնք բխում են համապատասխան երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերից:

6. Յուրաքանչյուր Մասնակից պետություն նշանակում է մարմին կամ, անհրաժեշտության դեպքում, մարմիններ, որոնք պետք է հարցումներ ստանան օգնության գրանցման կամ նրա դրոշը կրելու նավի իրավունքի հաստատման մասին, ինչպես նաև անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու և այդ հարցումներին պատասխանելու թույլտվության վերաբերյալ: Այդպիսի նշանակման մասին ծանուցագիրը Գլխավոր քարտուղարի միջոցով մյուս Մասնակից պետություններին է ուղարկվում նշանակման պահից մեկ ամսվա ընթացքում:

7. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, որը ողջամիտ հիմքեր ունի կասկածելու, որ նավը մասնակցում է ծովով միգրանտների անօրինական ներմուծմանը և ազգություն չունի կամ կարող է հավասարեցվել առանց ազգության նավի, կարող է բարձրանալ այդ նավ և զննություն կատարել: Եթե հայտնաբերվել են այդ կասկածը հաստատող ապացույցները, ապա այդպիսի Մասնակից պետությունը պատշաճ միջոցներ է ձեռնարկում՝ ներքին և միջազգային իրավունքի համապատասխան դրույթներին համաձայն:

Հոդված 9

Պաշտպանող դրույթներ

1. Երբ Մասնակից պետությունը սույն Արձանագրության 8-րդ հոդվածին համապատասխան միջոցներ է ձեռնարկում որևէ նավի նկատմամբ, նա՝

(ա) ապահովում է դրանում գտնվող անձանց անվտանգությունը և դրանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունքը.

(բ) պատշաճորեն հաշվի է առնում նավի կամ դրա բեռի անվտանգությունը վտանգի տակ չդնելու անհրաժեշտությունը.

(գ) պատշաճորեն հաշվի է առնում դրոշի պետության կամ որևէ այլ շահագրգիռ պետության առևտրային կամ իրավաբանական շահերին վնաս չհասցնելու անհրաժեշտությունը.

(դ) գոյություն ունեցող հնարավորությունների սահմաններում ապահովում է, որ նավի նկատմամբ ընդունված ցանկացած միջոց համապատասխանի բնապահպանական անվտանգության նկատառումներին:

2. Եթե շարժառիթները, որոնք հաշվի առնելով միջոցներ են ձեռնարկվել սույն Արձանագրության 8-րդ հոդվածին համաձայն, համարվեն չհիմնավորված, ապա նավը փոխհատուցում կստանա պատճառված վնասների կամ վնասի համար՝ պայմանով, որ այդ նավը որևէ արարք չի կատարել, որն արդարացնէր ձեռնարկվող միջոցները:

3. Ցանկացած միջոց, որը կատարվել է կամ իրականացվել է սույն գլխին համապատասխան, պատշաճորեն արտացոլում է անհրաժեշտությունը՝ չխոչընդոտելու կամ վնաս չպատճառելու.

(ա) առափնյա պետությունների իրավունքներին ու պարտավորություններին և իրավասության իրականացմանը՝ միջազգային ծովային իրավունքին համապատասխան, կամ

(բ) նավի հետ կապված վարչական, տեխնիկական և սոցիալական հարցերով իրավասություն և վերահսկողություն իրականացնելու դրոշի պետության լիազորություններին:

4. Ցանկացած միջոց, որը, սույն գլխին համապատասխան, ձեռնարկվում է ծովում, իրականացվում է միայն ռազմական նավերի կամ ռազմական թռչող սարքերի կողմից կամ այլ նավերի կամ թռչող սարքերի կողմից, որոնք ունեն հստակ արտաքին նշաններ, որոնք թույլ են տալիս ճանաչել դրանց որպես պետական ծառայության մեջ գտնվող, և որոնք կոչված են այդ նպատակի համար:

3. Կանխումը, համագործակցությունը և այլ միջոցները

Հոդված 10

Տեղեկատվություն

1. Առանց Կոնվենցիայի 27-րդ և 28-րդ հոդվածներին վնասելու՝ Մասնակից պետությունները, առաջին հերթին այն Մասնակից պետությունները, որոնք ընդհանուր սահմաններ ունեն կամ գտնվում են այն երթուղիներում, որոնցով իրականացվում է միգրանտների անօրինական ներմուծումը, սույն Արձանագրության նպատակներին հասնելու համար, իրենց ներքին իրավական և վարչական համակարգերին համապատասխան, տեղեկություն են փոխանակում այնպիսի հարցերով, ինչպիսիք են.

(ա) ուղարկման և նշանակման կետերը, ինչպես նաև՝ երթուղիները, փոխադրողները և տրանսպորտային միջոցները, որոնք, ինչպես դա հայտնի է կամ կասկածվում է, օգտագործվում են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների կատարման մեջ մասնակցող որևէ կազմակերպված հանցավոր խմբի կողմից.

(բ) տվյալները կազմակերպությունների կամ կազմակերպված հանցավոր խմբերի մասին, որոնք, ինչպես դա հայտնի է կամ կասկածվում է, մասնակցում են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների կատարմանը, և այն մեթոդները, որոնք նրանք օգտագործում են.

(գ) Մասնակից պետության կողմից տրվող մուտքի/ելքի փաստաթղթերի իսկության տարբերակիչ հատկանիշները և տեղեկություններ առևանգված մուտքի/ելքի կամ անձը հաստատող փաստաթղթերի ձևաթղթերի կամ դրանց հետագա անիրավաչափ օգտագործման մասին.

(դ) մարդկանց թաքցնելու և տեղափոխելու միջոցներն ու մեթոդները, մուտքի/ելքի կամ անձը հաստատող փաստաթղթերի անօրինական փոփոխելը, վերարտադրելը կամ ձեռք բերելը կամ դրանց անիրավաչափ օգտագործելը, որոնք կիրառվում են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքները կատարելիս, և դրանց բացահայտման միջոցները.

(ե) օրենսդրական փորձը, ինչպես նաև պրակտիկան և այն միջոցները, որոնք ուղղված են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների կանխարգելմանը և դրանց դեմ պայքարին, և

(զ) գիտատեխնիկական տեղեկատվությունը, որն օգտակար է իրավապահ մարմինների գործունեության համար՝ սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների կանխարգելման, բացահայտման ու քննության և դրանց հետ առնչություն ունեցող անձանց քրեական հետապնդման նրանց հնարավորություններն ընդլայնելու նպատակով:

2. Մասնակից պետությունը, որը տեղեկություն է ստանում, կատարում է տեղեկությունը տրամադրող Մասնակից պետության ցանկացած այն խնդրանքը, որն առնչվում է դրա օգտագործման սահմանափակումներ նախատեսելու հետ:

Հոդված 11

Սահմանային հսկողության միջոցները

1. Առանց մարդկանց ազատ տեղաշարժի վերաբերյալ միջազգային պարտավորություններին վնասելու՝ Մասնակից պետությունները, որքանով դա հնարավոր է, նախատեսում են սահմանային հսկողության այնպիսի միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել միգրանտների անօրինական ներմուծման կանխարգելման և հայտնաբերման համար:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ձեռնարկում է օրենսդրական և այլ պատշաճ միջոցներ՝ կանխարգելելու, որքանով դա հնարավոր է, առևտրային փոխադրողների կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների օգտագործումը այնպիսի հանցագործություն կատարելիս, որն այդպիսին է ճանաչվել սույն Արձանագրության 6-րդ հոդվածի 1 (ա) կետին համապատասխան:

3. Պատշաճ դեպքերում և առանց կիրառելի միջազգային կոնվենցիաներին վնասելու՝ այդպիսի միջոցները ներառում են առևտրային փոխադրողների, այդ թվում՝ ցանկացած տրանսպորտային ընկերության կամ տիրապետողի կամ ցանկացած տրանսպորտային միջոցների օպերատորի համար պարտավորության նախատեսում՝ համոզվելու այն բանում, որ բոլոր ուղևորներն ունեն ընդունող պետություն մուտք գործելու համար անհրաժեշտ մուտքի/ելքի փաստաթղթերը:

4. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված պարտավորությունը խախտելու համար սանկցիաներ նախատեսելու նպատակով:

5. Յուրաքանչյուր Մասնակից պետություն քննարկում է այնպիսի միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը, որոնք, նրա ներքին օրենսդրությանը համապատասխան, թույլ են տալիս մերժելու այն անձանց մուտքը, որոնք մասնակից են այնպիսի հանցագործությունների կատարմանը, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Արձանագրությանը համապատասխան, կամ չեղյալ համարել նրանց մուտքի արտոնագրերը:

6. Առանց Կոնվենցիայի 27-րդ հոդվածին վնասելու՝ Մասնակից պետությունները քննարկում են սահմանային վերահսկողության մարմինների միջև համագործակցության ամրապնդման հնարավորությունը, այդ թվում՝ ուղիղ կապի ուղիների ստեղծման և պահպանման միջոցով:

Հոդված 12

Փաստաթղթերի հուսալիությունը և դրանց նկատմամբ վերահսկողությունը

Յուրաքանչյուր Մասնակից պետություն առկա հնարավորությունների սահմաններում ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք կարող են պահանջվել հետևյալի համար.

(ա) իր կողմից տրվող մուտքի/ելքի կամ անձը հաստատող փաստաթղթերի այնպիսի որակ ապահովելու, որը առավելագույն չափով կդժվարացնի դրանց անիրավաչափ օգտագործելը և կեղծելը կամ անօրինական փոփոխելը, վերարտադրելը կամ տրամադրելը, և

(բ) այդ Մասնակից պետության կողմից կամ նրա անունից տրված մուտքի/ելքի կամ անձը հաստատող փաստաթղթերի պաշտպանվածությունը և հուսալիությունն ապահովելու, ինչպես նաև դրանց անօրինական պատրաստելը, հանձնելը և օգտագործելը կանխարգելելու համար:

Հոդված 13

Փաստաթղթերի օրինականությունը և վավերականությունը

Մասնակից պետությունը մյուս Մասնակից պետության խնդրանքով, իր ներքին օրենսդրությանը համապատասխան, ողջամիտ ժամկետում անցկացնում է իր կամ իբրև թե իր անունից տրված մուտքի/ելքի կամ անձը հաստատող փաստաթղթերի օրինականության և վավերականության ստուգում, որոնց վերաբերյալ կասկածներ կան, որ դրանք օգտագործվում են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների կատարման նպատակով:

Հոդված 14

Կադրերի պատրաստումը և տեխնիկական համագործակցությունը

1. Մասնակից պետությունները ապահովում կամ կատարելագործում են միգրացիոն և այլ համապատասխան մարմինների աշխատակիցների մասնագիտացված պատրաստումը սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների կանխարգելման և այդպիսի արարքների օբյեկտ դարձած միգրանտների հետ մարդասիրական վերաբերմունքի հարցերով՝ սույն Արձանագրությամբ սահմանված նրանց իրավունքների հարգման ապահովմամբ:

2. Մասնակից պետությունները պատշաճ դեպքերում միմյանց և իրավասու միջազգային կազմակերպությունների, ոչ կառավարական կազմակերպությունների, այլ համապատասխան կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ տարրերի հետ համագործակցում են իրենց տարածքում կադրերի պատշաճ պատրաստման ապահովման գործում՝ այն արարքների կանխարգելման, նախազգուշացման և արմատախիլ անելու նպատակով, որոնք նշված են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում, ինչպես նաև այդպիսի արարքների օբյեկտ դարձած միգրանտների իրավունքների պաշտպանության նպատակով: Նշված պատրաստումը ներառում է.

(ա) մուտքի/ելքի փաստաթղթերի հուսալիության և որակի բարձրացումը.

(բ) մուտքի/ելքի և անձը հաստատող կեղծ փաստաթղթերի հայտնաբերումը և բացահայտումը.

(զ) հանցագործությունների մասին օպերատիվ տեղեկություն հավաքելը, որը, մասնավորապես, վերաբերում է այն կազմակերպված հանցավոր խմբերի բացահայտմանը, որոնք, ինչպես դա հայտնի է, կասկածվում կամ մասնակցում են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների կատարմանը, այն մեթոդներին, որոնք օգտագործվում են անօրինական ներմուծվող միզրանտների տեղափոխման, մուտքի/ելքի կամ անձը հաստատող փաստաթղթերի անիրավաչափ օգտագործման համար՝ սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքները կատարելու նպատակով, և միզրանտների անօրինական ներմուծման ժամանակ օգտագործվող պարտական միջոցների բացահայտմանը.

(դ) անօրինական ներմուծվող անձանց սահմանված և չսահմանված կետերում հայտնաբերելու ընթացակարգերի կատարելագործումը.

(ե) մարդասիրական վերաբերմունքը միզրանտների հետ և նրանց այն իրավունքների պաշտպանությունը, որոնք սահմանված են սույն Արձանագրությամբ:

3. Մասնակից պետությունները, որոնք համապատասխան մասնագետներ և փորձ ունեն, քննարկում են այն պետություններին տեխնիկական օգնություն տրամադրելու հնարավորությունը, որոնք հաճախ են ծագման կամ տարանցման երկիր համարվում այն անձանց համար, որոնք դարձել են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ: Մասնակից պետությունները բոլոր ջանքերը գործադրում են անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրելու համար, ինչպիսիք են տրանսպորտային միջոցները, համակարգչային համակարգերը և փաստաթղթեր կարդալու համար սարքավորումները՝ այն արարքների դեմ պայքարելու նպատակների համար, որոնք նշված են 6-րդ հոդվածում:

Հոդված 15

Կանխարգելման այլ միջոցները

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն միջոցներ է ձեռնարկում տեղեկատվական ծրագրերի ստեղծման կամ կատարելագործման ապահովման ուղղությամբ, որոնք ուղղված են հասարակության կողմից այն հանգամանքի ըմբռնման խորացմանը, որ արարքները, որոնք նշված են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում, իրենցից այնպիսի հանցավոր գործունեություն են ներկայացնում, որը հաճախ կազմակերպված հանցավոր խմբերն իրականացնում են շահադիտական նպատակներով, և որը համապատասխան միզրանտների համար լուրջ վտանգ է ստեղծում:

2. Կոնվենցիայի 31-րդ հոդվածին համապատասխան Մասնակից պետությունները համագործակցում են հասարակական տեղեկատվության բնագավառում՝ պոտենցիալ միզրանտների՝ կազմակերպված հանցավոր խմբերի գոհեր դառնալը կանխելու նպատակով:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն աջակցում է ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում ծրագրերի մշակմանը և

համագործակցությանը կամ, պատշաճ դեպքերում, կատարելագործում է այդպիսի ծրագրերը և համագործակցությունը՝ հաշվի առնելով միգրացիայի սոցիալ-տնտեսական իրողությունը և հատուկ ուշադրություն դարձնելով անբարենպաստ տնտեսական և սոցիալական դրության մեջ գտնվող շրջաններին՝ միգրանտների անօրինական ներմուծման այնպիսի արմատական սոցիալ-տնտեսական պատճառների դեմ պայքարի նպատակով, ինչպիսիք են չքավորությունը և զարգացման ցածր մակարդակը:

Հոդված 16

Օգնության և պաշտպանության միջոցները

1. Սույն Արձանագրությունը իրականացնելիս յուրաքանչյուր Մասնակից պետություն, Միջազգային իրավունքով իր պարտավորություններին համապատասխան, ձեռնարկում է բոլոր պատշաճ միջոցները, այդ թվում, եթե դա անհրաժեշտ է, օրենսդրության բնագավառում, այն անձանց իրավունքների պաշտպանության համար, որոնք դարձել են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ, ինչպես այդ իրավունքները նախատեսված են միջազգային իրավունքի կիրառելի նորմերով, մասնավորապես՝ կյանքի իրավունքը և խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակների չենթարկվելու իրավունքը:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պատշաճ միջոցներ է ձեռնարկում միգրանտներին այնպիսի բռնությունից համապատասխան պաշտպանություն տրամադրելու ուղղությամբ, որին առանձին անձանց կամ խմբերի կողմից նրանք կարող են ենթարկվել այն պատճառով, որ նրանք դարձել են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն անհրաժեշտ օգնություն է տրամադրում այն միգրանտներին, որոնց կյանքն ու անվտանգությունը վտանգի տակ են դրված այն պատճառով, որ նրանք դարձել են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ:

4. Սույն հոդվածի դրույթները կիրառելիս Մասնակից պետությունները նկատի են ունենում կանանց և երեխաների հատուկ պահանջմունքները:

5. Որևէ անձի ձերբակալման դեպքում, որը դարձել է սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ, յուրաքանչյուր Մասնակից պետություն կատարում է Հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի Կոնվենցիայով նախատեսված իր պարտավորությունները, երբ դա կիրառելի է, այդ թվում՝ այդ անձին այն դրույթների վերաբերյալ անհապաղ տեղեկացնելու պարտավորությունը, որոնք վերաբերում են հյուպատոսական պաշտոնատար անձանց ուղարկվող ծանուցագրերին և այդպիսի պաշտոնատար անձանց հետ հաղորդակցություններին:

Հոդված 17

Համաձայնագրեր և պայմանավորվածություններ

1. Մասնակից պետությունները քննարկում են երկկողմ կամ տարածաշրջանային համաձայնագրեր կամ օպերատիվ պայմանավորվածություններ կամ փոխըմբռնումներ կնքելու հնարավորությունը, որոնք ուղղված են.

ա) այն արարքների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ուղղությամբ առավել պատշաճ և արդյունավետ միջոցների ընդունմանը, որոնք նշված են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում.

բ) նրանց միջև հարաբերություններում սույն Արձանագրության դրույթների կիրառման զարգացմանը:

Հոդված 18

Անօրինական ներմուծված միգրանտների վերադարձելը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն համաձայնում է աջակցել այն անձի վերադարձին և ընդունել նրան առանց չհիմնավորված կամ ոչ ողջամիտ ուշացումների, որը դարձել է սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ, և որը նրա քաղաքացին է համարվում, կամ որը վերադառնալու պահին նրա տարածքում մշտական բնակվելու իրավունք ունի:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրությանը համապատասխան, քննարկում է այն անձի վերադարձմանն աջակցելու և նրան ընդունելու հնարավորությունը, որը դարձել է սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ, և որն ընդունող պետություն մուտքի պահին նրա տարածքում մշտապես բնակվելու իրավունք ունի:

3. Ընդունող Մասնակից պետության խնդրանքով հայցվող Մասնակից պետությունը, առանց չհիմնավորված կամ ոչ ողջամիտ ուշացումների, ստուգում է՝ հանդիսանո՞ւմ է արդյոք այն անձը, որը դարձել է սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ, նրա քաղաքացին կամ ունի՞ արդյոք նրա տարածքում մշտապես բնակվելու իրավունք:

4. Այն անձի վերադարձմանն աջակցելու նպատակով, որը դարձել է սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ և չունի անհրաժեշտ փաստաթղթեր, Մասնակից պետությունը, որի քաղաքացին է համարվում այդ անձը, կամ որի տարածքում այդպիսի անձը ունի մշտապես բնակվելու իրավունք, ընդունող Մասնակից պետության խնդրանքով համաձայնում է տալ մուտքի/ելքի այնպիսի փաստաթղթեր կամ այլ թույլտվություններ, ինչպիսիք կարող են պահանջվել այդ անձին նրա տարածք վերադարձնելու համար:

5. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, որը կապ ունի այն անձին վերադարձնելու հետ, որը դարձել է սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ, բոլոր պատշաճ միջոցները ձեռնարկում է այդպիսի վերադարձը

կարգավորված ձևով իրականացնելու համար՝ այդ անձի անվտանգության ապահովման և արժանապատվությունը հարգելու հարցերը պատշաճորեն հաշվի առնելով:

6. Սույն հոդվածի իրականացման հարցերով Մասնակից պետությունները կարող են համագործակցել համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ:

7. Սույն հոդվածը, ընդունող Մասնակից պետության ներքին օրենսդրության որևէ դրույթի ուժով, չի վնասում այն անձանց տրամադրված որևէ իրավունքին, որոնք դարձել են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ:

8. Սույն հոդվածը չի շոշափում որևէ այլ պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ լինեն դրանք երկկողմ թե բազմակողմ կամ որևէ այլ կիրառելի օպերատիվ համաձայնությամբ կամ պայմանավորվածությամբ, որոնք լրիվ կամ մասամբ կարգավորում են այն անձանց վերադարձնելու հարցերը, որոնք դարձել են սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ:

4. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 19

Բացառող դրույթ

1. Ոչինչ սույն Արձանագրությունում չի շոշափում պետությունների և առանձին անձանց միջազգային իրավունքի համաձայն այլ իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվությունը, ներառյալ միջազգային հումանիտար իրավունքը և մարդու իրավունքների բնագավառում միջազգային իրավունքը և, մասնավորապես, երբ դա կիրառելի է, փախստականների կարգավիճակին վերաբերող 1951 թ. Կոնվենցիան և 1967 թ. Արձանագրությունը և չվտարման սկզբունքը, որն ամրագրված է դրանցում:

2. Սույն Արձանագրությամբ նախատեսված միջոցները մեկնաբանվում և կիրառվում են այնպես, որ դա անձանց վերաբերյալ խտրական չհամարվի այն բանի հիման վրա, որ նրանք սույն Արձանագրության 6-րդ հոդվածում նշված արարքների օբյեկտ են դարձել: Այդ միջոցների մեկնաբանումը և կիրառումն իրականացվում են անխտրականության միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին համապատասխան:

Հոդված 20

Վեճերի կարգավորումը

1. Մասնակից պետությունները ձգտում են սույն Արձանագրության մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ վեճերը կարգավորել բանակցությունների միջոցով:

2. Սույն Արձանագրության մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ երկու և ավելի Մասնակից պետությունների միջև ցանկացած վեճ, որը ողջամիտ ժամկետում չի կարող կարգավորվել բանակցությունների միջոցով, այդ Մասնակից

պետություններից մեկի խնդրանքով փոխանցվում է արբիտրաժային քննության: Եթե արբիտրաժի մասին խնդրանքով դիմելու օրվանից վեց ամսվա ընթացքում այդ Մասնակից պետությունները չկարողանան պայմանավորվել դրա կազմակերպման շուրջ, այդ Մասնակից պետություններից յուրաքանչյուրը կարող է վեճը փոխանցել Միջազգային դատարան՝ Դատարանի Կանոնադրությանը համապատասխան դիմում ներկայացնելով:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն սույն Արձանագրությունը ստորագրելիս, վավերացնելիս, ընդունելիս կամ հաստատելիս կամ դրան միանալիս կարող է հայտնել այն մասին, որ ինքը իրեն կապված չի համարում սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներով: Մյուս Մասնակից պետությունները կապված չեն սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներով՝ այդպիսի վերապահում արած ցանկացած Մասնակից պետության նկատմամբ:

4. Սույն հոդվածի 3-րդ կետի համապատասխան վերապահում կատարած ցանկացած Մասնակից պետություն կարող է ցանկացած ժամանակ հանել այդ վերապահումը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ծանուցագիր ուղարկելու միջոցով:

Հոդված 21

Ստորագրելը, վավերացնելը, ընդունելը, հաստատելը և միանալը

1. Սույն Արձանագրությունը ստորագրման համար բաց է բոլոր պետությունների կողմից 2000 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 15-ը՝ Պալերմոյում՝ Իտալիա, իսկ հետագայում՝ Նյու Յորքում՝ Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հիմնարկներում՝ մինչև 2002 թվականի դեկտեմբերի 12-ը:

2. Սույն Արձանագրությունը ստորագրման համար բաց է նաև տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպությունների կողմից՝ պայմանով, որ այդպիսի կազմակերպության անդամ պետություններից առնվազն մեկը, սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, ստորագրել է սույն Արձանագրությունը:

3. Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերագրերը կամ ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպությունն իր վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը կարող է ի պահ հանձնել, եթե նրա անդամ պետություններից առնվազն մեկը նույն կերպ է վարվել: Այդ վավերագրում կամ ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթում այդպիսի կազմակերպությունը հայտարարում է այն հարցերի վերաբերյալ իր իրավասության ոլորտի մասին, որոնք կարգավորվում են սույն Արձանագրությամբ: Այդպիսի կազմակերպությունն ավանդապահին հայտնում է նաև իր իրավասության ոլորտի ցանկացած համապատասխան փոփոխության մասին:

4. Սույն Արձանագրությունը միանալու համար բաց է ցանկացած պետության կամ ցանկացած տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպության կողմից, որի անդամ պետություններից առնվազն մեկը սույն Արձանագրության Մասնակից է համարվում: Միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Միանալիս տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպությունը հայտնում է այն հարցերի վերաբերյալ իր իրավասության ոլորտի մասին, որոնք կարգավորվում են սույն Արձանագրությամբ: Այդպիսի կազմակերպությունն ավանդապահին հայտնում է նաև իր իրավասության ոլորտի ցանկացած համապատասխան փոփոխության մասին:

Հոդված 22

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում քառասուներորդ վավերագիրը կամ ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվից հետո իննսուներորդ օրը, բայց այն ուժի մեջ չի մտնում մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը: Սույն կետի նպատակների համար ցանկացած այդպիսի վավերագիր կամ փաստաթուղթ, որը ի պահ է հանձնվել տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպության կողմից, չի դիտվում որպես լրացուցիչ այն վավերագրերին կամ փաստաթղթերին, որոնք ի պահ են հանձնվել այդպիսի կազմակերպության անդամ պետությունների կողմից:

2. Յուրաքանչյուր պետության կամ տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպության համար, որոնք վավերացնում, ընդունում կամ հաստատում են սույն Արձանագրությունը կամ միանում են դրան քառասուներորդ վավերագիրը կամ այդպիսի գործողության մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այդպիսի պետության կամ կազմակերպության կողմից համապատասխան վավերագիրը կամ փաստաթուղթն ի պահ հանձնվելու ամսաթվից հետո երեսուներորդ օրը կամ, սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվին՝ կախված նրանից, թե որն է ավելի ուշ տեղի ունենում:

Հոդված 23

Ուղղումներ

1. Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հինգ տարին լրանալուց հետո սույն Արձանագրության Մասնակից պետությունը կարող է ուղղում առաջարկել և այն ուղարկել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այնուհետ առաջարկվող ուղղումն ուղարկում է Մասնակից պետություններին և Կոնվենցիայի Մասնակիցների խորհրդածոլովին՝ այդ առաջարկության քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով: Սույն Արձանագրության Մասնակից պետությունները, որոնք մասնակցում են Մասնակիցների խորհրդածոլովին, բոլոր ջանքերը գործադրում են յուրաքանչյուր ուղղման

վերաբերյալ համաձայնության գալու համար: Եթե համաձայնության գալու բոլոր ջանքերը սպառվել են, և համաձայնություն ձեռք չի բերվել, ապա, որպես ծայրահեղ միջոց, ուղղումն ընդունելու համար պահանջվում է սույն Արձանագրության այն Մասնակից պետությունների ձայների երկու երրորդի մեծամասնությունը, որոնք Մասնակիցների խորհրդաժողովի նիստին ներկա են և մասնակցում են քվեարկությանը:

2. Տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպություններն իրենց իրավասության ոլորտում ընդգրկվող հարցերով ձայնի իրենց իրավունքն իրականացնում են սույն հոդվածի համաձայն՝ ունենալով ձայների այնքան քանակ, որը հավասար է իրենց անդամ պետությունների քանակին, որոնք սույն Արձանագրության Մասնակիցներ են համարվում: Այդպիսի կազմակերպություններն իրենց ձայնի իրավունքը չեն իրականացնում, եթե նրանց անդամ պետությունները իրականացնում են իրենց ձայնի իրավունքը և ընդհակառակը:

3. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ընդունված ուղղումը ենթակա է Մասնակից պետությունների կողմից վավերացման, ընդունման կամ հաստատման:

4. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ընդունված ուղղումը Մասնակից պետության նկատմամբ ուժի մեջ է մտնում նրա կողմից այդ ուղղման վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնվելու ամսաթվից հետո իննսուն օր անց:

5. Երբ ուղղումն ուժի մեջ է մտնում, այն պարտադիր է դառնում այն Մասնակից պետությունների համար, որոնք դրանով կապված լինելու համաձայնություն են արտահայտել: Մյուս Մասնակից պետությունները շարունակում են կապված լինել սույն Արձանագրության դրույթներով և նրանց կողմից նախկինում վավերացված, ընդունված կամ հաստատված ցանկացած ուղղումով:

Հոդված 24

Գործողությունը դադարեցնելը

1. Մասնակից պետությունը կարող է դադարեցնել սույն Արձանագրության գործողությունը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցագիր ուղարկելու միջոցով: Գործողության այդպիսի դադարեցումն ուժի մեջ է մտնում ծանուցագիրը Գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվից մեկ տարին լրանալուց հետո:

2. Տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպությունը դադարում է սույն Արձանագրության Մասնակից լինել, երբ նրա բոլոր անդամ պետությունները դադարեցնում են սույն Արձանագրության գործողությունը:

Հոդված 25

Ավանդապահը և լեզուները

1. Սույն Արձանագրության ավանդապահ է նշանակվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը:

2. Սույն Արձանագրության բնօրինակը, որի անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարապես նույնական են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ի կատարումն որի՝ ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչները, պատշաճորեն դրա համար լիազորված լինելով իրենց կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

***Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի հունվարի 28-ից:**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Կոնվենցիան լրացնող մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին

ՆԱԽԱԲԱՆ

Սույն Արձանագրության Մասնակից պետությունները,

հայտարարելով, որ մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է համընդգրկուն միջազգային մոտեցում ծագման, տարանցման և նշանակման երկրներում, ներառյալ այն միջոցները, որոնք ուղղված են այդպիսի առևտրի կանխարգելմանը, դրանով զբաղվող անձանց պատժելուն և այդպիսի առևտրի գոհերի պաշտպանությանը, այդ թվում՝ միջազգայնորեն ճանաչված նրանց՝ մարդու իրավունքների պաշտպանության միջոցով,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ, չնայած մարդկանց, հատկապես կանանց և երեխաների շահագործման դեմ պայքարի պրակտիկ միջոցառումներ նախատեսող մի ամբողջ շարք միջազգային փաստաթղթերի գոյությանը, չկա համընդհանուր փաստաթուղթ, որտեղ շոշափվեն մարդկանց առևտրի բոլոր կողմերը,

մտահոգված լինելով նրանով, որ նման փաստաթղթի բացակայության պայմաններում մարդկանց առևտրի տեսակետից առավել խոցելի հանդիսացող անձինք բավարար չափով պաշտպանված չեն լինի,

վկայակոչելով Գլխավոր ասամբլեայի 1998 թվականի դեկտեմբերի 9-ի հմ. 53/111 քանաձևը, որում Ասամբլեան որոշել է ստեղծել բաց կազմով միջկառավարական հատուկ կոմիտե անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ համընդգրկուն միջազգային կոնվենցիայի մշակման և, մասնավորապես, կանանց և երեխաների առևտրի դեմ պայքարին ուղղված միջազգային փաստաթղթի մշակման հարցի քննարկման համար,

համոզված լինելով, որ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված ազգերի կազմակերպության Կոնվենցիան մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման ու խափանման և դրա համար պատժի մասին միջազգային փաստաթղթով լրացնելը կնպաստի այդպիսի հանցագործությունների կանխարգելմանը և դրանց դեմ պայքարին,

համաձայնեցին հետևյալի մասին.

1. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

Կապը Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Կոնվենցիայի հետ

1. Սույն Արձանագրությունը լրացնում է Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Կոնվենցիան: Այն մեկնաբանվում է Կոնվենցիայի հետ համատեղ:
2. Կոնվենցիայի դրույթները սույն Արձանագրության նկատմամբ կիրառվում են պարտադիր, եթե դրանում այլ բան նախատեսված չէ:
3. Հանցագործությունները, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Արձանագրության 5-րդ հոդվածի համաձայն, դիտվում են որպես հանցագործություններ, որոնք այդպիսին են ճանաչվել Կոնվենցիային համապատասխան:

Հոդված 2

Նպատակները

Սույն Արձանագրության նպատակներն են.

- (ա) մարդկանց առևտրի կանխարգելումը և դրա դեմ պայքարը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և երեխաներին.
- (բ) այդպիսի առևտրից տուժողների պաշտպանությունը և օգնությունը՝ ամբողջովին հարգելով նրանց մարդու իրավունքները, և
- (գ) այդ նպատակներին հասնելու գործում Մասնակից պետությունների համագործակցության խրախուսումը:

Հոդված 3

Տերմինները

Սույն Արձանագրության նպատակների համար.

(ա) «մարդկանց առևտուր» նշանակում է՝ շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը ուժի սպառնալիքով կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով: Շահագործումը նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համանման սովորույթները, անազատ վիճակը կամ մարմնի մասերը կորզելը.

(բ) մարդկանց առևտրի գոհի համաձայնությունը այնպիսի պլանավորված շահագործմանը, որի մասին խոսվում է սույն հոդվածի ա՝ ենթակետում, հաշվի չի առնվում, եթե օգտագործվել է ա՝ ենթակետում նշված ներգործության միջոցներից որևէ մեկը.

(գ) շահագործման նպատակով երեխա հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը համարվում է «մարդկանց առևտուր» նույնիսկ այն դեպքում, եթե դրանք կապված չեն սույն հոդվածի ա՝ ենթակետում նշված ներգործության միջոցներից որևէ մեկի կիրառման հետ.

(դ) «երեխա» նշանակում է՝ ցանկացած անձ, որի 18 տարին չի լրացել:

Հոդված 4

Կիրառման ոլորտը

Սույն Արձանագրությունը, եթե դրանում այլ բան նշված չէ, կիրառվում է այն հանցագործությունների կապակցությամբ կանխարգելման, քննության և քրեական հետապնդման նկատմամբ, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Արձանագրության 5-րդ հոդվածին համապատասխան, եթե այդ հանցագործությունները կրում են անդրազգային բնույթ և կատարվել են կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ, ինչպես նաև այդպիսի հանցագործությունների գոհերի պաշտպանության նկատմամբ:

Հոդված 5

Քրեականացումը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ձեռնարկում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել՝ այն հաշվով, որ որպես քրեորեն

պատժելի արարքներ ճանաչվեն սույն Արձանագրության 3-րդ հոդվածում նշված գործողությունները, երբ դրանք կատարվում են դիտավորությամբ:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ձեռնարկում է նաև օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են պահանջվել՝ այն հաշվով, որ քրեորեն պատժելի ճանաչվեն հետևյալ արարքները.

(ա) իր իրավական համակարգի հիմնական սկզբունքների պահպանման պայմանով որևէ հանցագործություն կատարելու փորձը, որն այդպիսին է ճանաչվել սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան.

(բ) որևէ հանցագործության կատարմանը որպես հանցակից մասնակցելը, որն այդպիսին է ճանաչվել սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան.

(գ) այլ անձանց կազմակերպելը կամ նրանց ղեկավարելը որևէ հանցագործություն կատարելու նպատակով, որն այդպիսին է ճանաչվել սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան:

2. Մարդկանց առևտրի գոհերի պաշտպանությունը

Հոդված 6

Օգնությունը մարդկանց առևտրի գոհերին և նրանց պաշտպանությունը

1. Անհրաժեշտ դեպքերում և այն չափով, որքանով դա հնարավոր է իր ներքին օրենսդրության համաձայն, յուրաքանչյուր Մասնակից պետություն ապահովում է մարդկանց առևտրի գոհերի անձնական կյանքի և անհատականության պաշտպանությունը, այդ թվում՝ այլոց շարքում՝ այդպիսի առևտրին վերաբերող դատավարության գաղտնի բնույթն ապահովելու միջոցով:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ապահովում է, որ իր ներքին իրավական և վարչական համակարգը նախատեսի այնպիսի միջոցներ, որոնք պատշաճ դեպքերում թույլ են տալիս մարդկանց առևտրից տուժողներին տրամադրել.

ա) տեղեկություն համապատասխան դատական և վարչական քննության վերաբերյալ.

բ) պաշտպանության իրավունքներին չվնասող օգնություն, որը թույլ է տալիս քրեական դատավարության համապատասխան փուլերում արտահայտել և քննել նրանց կարծիքներն ու մտավախություններն այն անձանց վերաբերյալ, ովքեր հանցագործություն են կատարել:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն քննարկում է մարդկանց առևտրի գոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնման ապահովման միջոցների իրագործման հնարավորությունը, այդ թվում պատշաճ դեպքում համագործակցելով ոչ կառավարական կազմակերպությունների, այլ համապատասխան կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության

այլ տարրերի հետ, և, մասնավորապես, այնպիսի միջոցներ, որոնք նախատեսում են տրամադրել.

ա) պատշաճ տանիք.

բ).խորհրդատվական օգնություն և տեղեկություն, հատկապես նրանց իրավաբանական իրավունքների վերաբերյալ, այնպիսի լեզվով, որը հասկանալի է մարդկանց առևտրի գոհերին.

գ) բժշկական, հոգեբանական և նյութական օգնություն, և

դ)հնարավորություններ աշխատանքի տեղավորման, կրթության և մասնագիտական պատրաստման բնագավառներում:

4. Սույն հոդվածի դրույթները կիրառելիս յուրաքանչյուր Մասնակից պետություն հաշվի է առնում մարդկանց առևտրի գոհերի տարիքը, սեռը և հատուկ կարիքները, մասնավորապես, երեխաների հատուկ կարիքները, այդ թվում՝ պատշաճ տանիքի, կրթության և խնամքի վերաբերյալ:

5. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ձգտում է ապահովել մարդկանց առևտրի գոհերի ֆիզիկական անվտանգությունը իր տարածքում այդ գոհերի գտնվելու ժամանակահատվածում:

6. Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ իր ներքին իրավական համակարգը նախատեսի այնպիսի միջոցներ, որոնք մարդկանց առևտրի գոհերին հնարավորություն կտան պատճառված վնասի համար փոխհատուցում ստանալ:

Հոդված 7

Մարդկանց առևտրի գոհերի կարգավիճակը ընդունող պետություններում

1. Ի լրումն սույն Արձանագրության 6-րդ հոդվածի համապատասխան ձեռնարկվող միջոցների՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն քննարկում է օրենսդրական կամ այլ պատշաճ այնպիսի միջոցների ընդունման հնարավորությունը, որոնք մարդկանց առևտրի գոհերին թույլ կտան, պատշաճ դեպքերում, իր տարածքում մնալ ժամանակավոր կամ մշտական հիմունքներով:

2. Սույն հոդվածի 1-ին կետում պարունակվող դրույթն իրականացնելիս յուրաքանչյուր Մասնակից պետություն պատշաճ ձևով հաշվի է առնում մարդասիրական նկատառումները և կարեկցանք է ցուցաբերում:

Հոդված 8

Մարդկանց առևտրի գոհերի հայրենադարձությունը

1. Մասնակից պետությունը, որի քաղաքացին է համարվում մարդկանց առևտրի գոհը, կամ որտեղ այդպիսի անձը մշտական բնակվելու իրավունք ուներ ընդունող

Մասնակից պետության տարածք մուտք գործելու պահին, աջակցում է այդ անձի վերադարձին և ընդունում է նրան առանց չհիմնավորված և ոչ ողջամիտ ուշացումների՝ պատշաճորեն հաշվի առնելով այդպիսի անձի անվտանգության ապահովման հարցերը:

2. Երբ Մասնակից պետությունը մարդկանց առևտրի գոհին վերադարձնում է այն Մասնակից պետությանը, որի քաղաքացին է համարվում այդ անձը, կամ որտեղ նա մշտական բնակվելու իրավունք է ունեցել ընդունող Մասնակից պետության տարածք մուտք գործելու պահին, նման վերադարձն իրականացվում է այդ անձի անվտանգության ապահովման հարցերը պատշաճորեն հաշվի առնելով, ինչպես նաև այդ անձի՝ մարդկանց առևտրի գոհ դառնալու հանգամանքի կապակցությամբ ծագած ցանկացած բնույթի դատավարությունը հաշվի առնելով: Ընդ որում, այդպիսի վերադարձը՝ նախընտրելիորեն, համարվում է կամավոր:

3. Ընդունող Մասնակից պետության խնդրանքով, հայցվող Մասնակից պետությունը առանց չհիմնավորված և ոչ ողջամիտ ուշացումների ստուգում է՝ մարդկանց առևտրի գոհ դարձած անձը համարվում է արդյոք իր քաղաքացին, կամ արդյոք նա իր տարածքում մշտական բնակվելու իրավունք ունե ր ընդունող Մասնակից պետության տարածք մուտք գործելու պահին:

4. Մարդկանց առևտրի գոհի վերադարձմանն աջակցելու նպատակով, որը անհրաժեշտ փաստաթղթեր չունի, Մասնակից պետությունը, որի քաղաքացին է համարվում այդ անձը, կամ որտեղ նա մշտապես բնակվելու իրավունք ունե ր ընդունող Մասնակից պետության տարածք մուտք գործելու պահին, ընդունող Մասնակից պետության խնդրանքով, համաձայնում է հանձնել մուտքի/ելքի այնպիսի փաստաթղթեր կամ այլ թույլտվություններ, որոնք կարող են պահանջվել այդ անձին նրա տարածք վերադառնալու համար:

5. Սույն հոդվածը չի վնասում որևէ իրավունքի, որը մարդկանց առևտրի տուժողին տրամադրվում է ընդունող Մասնակից պետության ներքին օրենսդրության որևէ դրույթի ուժով:

6. Սույն հոդվածը չի վնասում ցանկացած կիրառելի երկկողմ կամ բազմակողմ համաձայնությանը կամ պայմանավորվածությանը, որը լրիվ կամ մասնակիորեն կարգավորում է մարդկանց առևտրի գոհերի վերադարձի հարցերը:

3. Կանխարգելում, համագործակցություն և այլ միջոցներ

Հոդված 9

Մարդկանց առևտուրը կանխարգելելը

1. Մասնակից պետությունները համալիր հիմունքով մշակում և ընդունում են քաղաքականություն, ծրագրեր և այլ միջոցներ՝ հետևյալ նպատակներով.

(ա) մարդկանց առևտուրը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու, և

(բ) մարդկանց առևտրի գոհերին, հատկապես կանանց և երեխաներին ռեվիկտիվիզացումից պաշտպանելու:

2. Մասնակից պետությունները ձգտում են ձեռնարկել այնպիսի միջոցներ, ինչպիսիք են հետազոտությունների, տեղեկատվական հանդիպումների անցկացումը, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներում, ինչպես նաև սոցիալ-տնտեսական նախաձեռնությունների իրականացումը, որոնք ուղղված են մարդկանց առևտրի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին:

3. Սույն հոդվածին համապատասխան մշակվող և ընդունվող քաղաքականությունը, ծրագրերը և այլ միջոցները պատշաճ դեպքերում ներառում են համագործակցությունը ոչ կառավարական կազմակերպությունների, այլ համապատասխան կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ տարրերի հետ:

4. Մասնակից պետությունները ձեռնարկում կամ կատարելագործում են այն միջոցները, այդ թվում՝ երկկողմ կամ բազմակողմ համագործակցության միջոցով, որոնք ուղղված են այնպիսի գործոնների ազդեցության մեղմացմանը, որոնք պայմանավորում են մարդկանց, հատկապես կանանց և երեխաների խոցելիությունը մարդկանց առևտրի տեսակետից, ինչպիսիք են՝ չքավորությունը, զարգացման ցածր մակարդակը և հավասար հնարավորությունների բացակայությունը:

5. Մասնակից պետությունները ընդունում կամ կատարելագործում են օրենսդրական կամ այլ միջոցները, օրինակ՝ կրթության կամ մշակույթի բնագավառում կամ սոցիալական բնագավառում, այդ թվում՝ երկկողմ և բազմակողմ համագործակցության միջոցով, որոնք ուղղված են մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների շահագործում առաջացնող պահանջարկին դրա բոլոր ձևերով հակադրելուն, քանի որ դա հանգեցնում է մարդկանց առևտրին:

Հոդված 10

Տեղեկության փոխանակումը և կադրերի պատրաստումը

1. Մասնակից պետությունների իրավապահ, միգրացիոն կամ այլ համապատասխան մարմինները պատշաճ դեպքերում միմյանց հետ համագործակցում են իրենց ներքին օրենսդրության համապատասխան այնպիսի տեղեկության փոխանակման միջոցով, որն իրենց թույլ կտա որոշել.

(ա) հանդիսանո՞ւմ են արդյոք անձինք, ովքեր առանց մուտքի/ելքի փաստաթղթերի կամ այլ անձանց պատկանող այդպիսի փաստաթղթերով հատում են կամ փորձում են հատել միջազգային սահմանը, մարդկանց առևտուր անողներ կամ այդպիսի առևտրի գոհեր.

(բ) մուտքի/ելքի փաստաթղթերի տեսակները, որոնք այդպիսի անձինք օգտագործել կամ փորձել են օգտագործել մարդկանց առևտրի նպատակով միջազգային սահմանն անցնելու համար, և

(գ) կազմակերպված հանցավոր խմբերի կողմից մարդկանց առևտրի նպատակով կիրառվող միջոցներն ու մեթոդները, այդ թվում՝ զոհերի հավաքագրումը և տեղափոխումը, այդպիսի առևտրով զբաղվող առանձին խմբերի և անձանց միջև երթուղիները և կապերը, ինչպես նաև այդպիսի խմբերի ներքին կապերը և դրանց հայտնաբերման հնարավոր միջոցները:

2. Մասնակից պետությունները ապահովում կամ կատարելագործում են իրավապահ, միգրացիոն և մարդկանց առևտրի կանխարգելման հարցերով մյուս համապատասխան մարմինների աշխատակիցների պատրաստվածությունը: Նշված պատրաստվածությունը պետք է կենտրոնացվի այդպիսի առևտրի կանխարգելման մեթոդների, դրանով զբաղվող անձանց քրեական հետապնդման և զոհերի իրավունքների պաշտպանության վրա, ներառյալ զոհերին այն անձանցից պաշտպանելը, որոնք զբաղվում են այդպիսի առևտրով: Պատրաստման ընթացքում պետք է նաև նկատի առնվի մարդու իրավունքների, երեխաների հիմնախնդիրների և հենդերային հիմնախնդիրների հաշվառման անհրաժեշտությունը. պատրաստումը պետք է նպաստի համագործակցությանը ոչ կառավարական կազմակերպությունների, այլ համապատասխան կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության այլ տարրերի հետ:

3. Մասնակից պետությունը, որը տեղեկություն է ստանում, կատարում է տեղեկությունը տրամադրող Մասնակից պետության ցանկացած խնդրանքը, որը կապված է դրա օգտագործման կապակցությամբ սահմանափակումներ նախատեսելու հետ:

Հոդված 11

Սահմանային հսկողության միջոցները

1. Առանց մարդկանց ազատ տեղաշարժի վերաբերյալ միջազգային պարտավորություններին վնասելու՝ Մասնակից պետությունները, որքանով դա հնարավոր է, նախատեսում են սահմանային վերահսկողության այնպիսի միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել մարդկանց առևտրի կանխարգելման և հայտնաբերման համար:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն ձեռնարկում է օրենսդրական կամ այլ պատշաճ միջոցներ՝ կանխելու, որքանով դա հնարավոր է, այնպիսի հանցագործությունների կատարման ժամանակ առևտրային փոխադրողների կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների օգտագործումը, որոնք այդպիսիք են ճանաչվել սույն Արձանագրության 5-րդ հոդվածին համապատասխան:

3. Պատշաճ դեպքերում և առանց կիրառելի միջազգային կոնվենցիաներին վնասելու, այդպիսի միջոցները ներառում են տրանսպորտային փոխադրողների, այդ թվում՝ ցանկացած տրանսպորտային ձեռնարկության կամ ցանկացած տրանսպորտային միջոցներ տիրապետողի կամ օպերատորի համար պարտավորության նախատեսում՝ համոզվելու այն բանում, որ բոլոր ուղևորներն ունեն ընդունող պետություն մուտք գործելու համար անհրաժեշտ մուտքի/ելքի փաստաթղթեր:

4. Յուրաքանչյուր մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության համապատասխան, անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ այն հաշվով, որ սանկցիաներ նախատեսի այն պարտավորության խախտման համար, որը սահմանված է սույն հոդվածի 3-րդ կետով:

5. Յուրաքանչյուր մասնակից պետություն քննարկում է այնպիսի միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը, որոնք, նրա ներքին օրենսդրության համապատասխան, թույլ են տալիս մերժելու այն անձանց մուտքը, որոնք մասնակից են այնպիսի հանցագործությունների կատարմանը, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Արձանագրությանը համապատասխան, կամ չեղյալ համարել նրանց մուտքի արտոնագրերը:

6. Առանց Կոնվենցիայի 27-րդ հոդվածին վնասելու՝ Մասնակից պետությունները քննարկում են սահմանային վերահսկողության մարմինների միջև համագործակցության ամրապնդման հնարավորությունը, այդ թվում՝ ուղիղ կապի ուղիների ստեղծման և պահպանման միջոցով:

Հոդված 12

Փաստաթղթերի հավաստիությունը և դրանց նկատմամբ վերահսկողությունը

Յուրաքանչյուր Մասնակից պետություն առկա հնարավորությունների սահմաններում ձեռնարկում է այնպիսի միջոցներ, ինչպիսիք կարող են պահանջվել հետևյալի համար.

(ա) իր կողմից տրվող մուտքի/ելքի կամ անձը հաստատող փաստաթղթերի այնպիսի որակ ապահովելու, որը առավելագույն չափով կոժվարացնի դրանց անիրավաչափ օգտագործելը և կեղծելը կամ անօրինական փոփոխելը, վերարտադրելը կամ տրամադրելը, և

(բ) այդ Մասնակից պետության կողմից կամ նրա անունից տրված մուտքի/ելքի կամ անձը հաստատող փաստաթղթերի պաշտպանվածությունը և հավաստիությունն ապահովելու, ինչպես նաև դրանց անօրինական պատրաստելը, հանձնելը և օգտագործելը կանխելու համար:

Հոդված 13

Փաստաթղթերի օրինականությունը վավերականությունը

Մի Մասնակից պետությունը մյուս Մասնակից պետության խնդրանքով, իր ներքին օրենսդրությանը համապատասխան և ողջամիտ ժամկետում, անցկացնում է իր կամ իբրև թե իր անունից տրված մուտքի/ելքի կամ անձը հաստատող փաստաթղթերի օրինականության և վավերականության ստուգում, որոնց վերաբերյալ կասկածներ կան, որ դրանք օգտագործվում են մարդկանց առևտրի համար:

4. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 14

Բացառող դրույթ

1. Սույն Արձանագրության մեջ ոչինչ չի շոշափում պետությունների և առանձին անձանց միջազգային իրավունքի համաձայն այլ իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվությունը, ներառյալ միջազգային հումանիտար իրավունքը և մարդու իրավունքների բնագավառում միջազգային իրավունքը և, մասնավորապես, երբ դա կիրառելի է, փախստականների կարգավիճակին վերաբերող 1951 թվականի Կոնվենցիան և 1967 թվականի Արձանագրությունը և չվտարման սկզբունքը, որն ամրագրված է դրանցում:

2. Սույն Արձանագրությամբ նախատեսված միջոցները մեկնաբանվում և կիրառվում են այնպես, որ դա անձանց վերաբերյալ խտրական չհամարվի այն բանի հիման վրա, որ նրանք մարդկանց առևտրի զոհ են դարձել: Այդ միջոցների մեկնաբանումը և կիրառումն իրականացվում է անխտրականության միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին համապատասխան:

Հոդված 15

Վեճերի կարգավորումը

1. Մասնակից պետությունները ձգտում են սույն Արձանագրության մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ վեճերը կարգավորել բանակցությունների միջոցով:

2. Սույն Արձանագրության մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ երկու և ավելի Մասնակից պետությունների միջև ցանկացած վեճ, որը ողջամիտ ժամկետում չի կարող կարգավորվել բանակցությունների միջոցով, այդ երկրներից մեկի խնդրանքով փոխանցվում է արբիտրաժային քննության: Եթե արբիտրաժի մասին խնդրանքով դիմելու օրվանից վեց ամսվա ընթացքում այդ Մասնակից պետությունները չկարողանան պայմանավորվել դրա կազմակերպման շուրջ, այդ Մասնակից պետություններից յուրաքանչյուրը վեճը կարող է փոխանցել Միջազգային դատարան՝ Դատարանի կանոնադրությանը համապատասխան դիմում ներկայացնելով:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն սույն Արձանագրությունը ստորագրելիս, վավերացնելիս, ընդունելիս կամ հաստատելիս կամ դրան միանալիս կարող է հայտարարել այն մասին, որ իրեն կապված չի համարում սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներով: Մյուս Մասնակից պետությունները կապված չեն սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներով՝ այդպիսի վերապահում արած ցանկացած Մասնակից պետության նկատմամբ:

4. Սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան վերապահում կատարած ցանկացած Մասնակից պետություն կարող է ցանկացած ժամանակ հանել այդ վերապահումը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ծանուցագիր ուղղելու միջոցով:

Հոդված 16

Ստորագրելը, վավերացնելը, ընդունելը, հաստատելը, միանալը

1. Սույն Արձանագրությունը ստորագրման համար բաց է բոլոր պետությունների կողմից 2000 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 15-ը՝ Պալերմոյում՝ Իտալիա, իսկ հետագայում՝ Նյու Յորքում՝ Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հիմնարկություններում՝ մինչև 2002 թվականի դեկտեմբերի 12-ը:

2. Սույն Արձանագրությունը ստորագրման համար բաց է նաև տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպությունների կողմից՝ պայմանով, որ այդպիսի կազմակերպության անդամ պետություններից առնվազն մեկը, սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, ստորագրել է սույն Արձանագրությունը:

3. Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերագրերը կամ ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպությունն իր վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը կարող է ի պահ հանձնել, եթե նրա անդամ պետություններից առնվազն մեկը նույն կերպ է վարվել: Այդ վավերագրում կամ ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթում այդպիսի կազմակերպությունը հայտարարում է այն հարցերի վերաբերյալ իր իրավասության ոլորտի մասին, որոնք կարգավորվում են սույն Արձանագրությամբ: Այդպիսի կազմակերպությունն ավանդապահին հայտնում է նաև իր իրավասության ոլորտի ցանկացած համապատասխան փոփոխության մասին:

4. Սույն Արձանագրությունը միանալու համար բաց է ցանկացած պետության կամ տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպության կողմից, որի անդամ պետություններից առնվազն մեկը սույն Արձանագրության Մասնակից է համարվում: Միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Միանալիս տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպությունը հայտարարում է այն հարցերի վերաբերյալ իր իրավասության ոլորտի մասին, որոնք կարգավորվում են սույն Արձանագրությամբ: Այդպիսի կազմակերպությունն ավանդապահին հայտնում է նաև իր իրավասության ոլորտի ցանկացած համապատասխան փոփոխության մասին:

Հոդված 17

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Արձանագրությունը ուժի մեջ է մտնում քառասուներորդ վավերագիրը կամ ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվից հետո իննսուներորդ օրը, բայց այն ուժի մեջ չի մտնում մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը: Սույն կետի նպատակի համար ցանկացած այդպիսի

վավերագիրը կամ փաստաթուղթը, որը ի պահ է հանձնվել տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպության կողմից, չի դիտվում որպես լրացուցիչ այն վավերագրերին կամ փաստաթղթերին, որոնք ի պահ են հանձնվել այդպիսի կազմակերպության անդամ պետությունների կողմից:

2. Յուրաքանչյուր պետության կամ տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպության համար, որոնք վավերացնում, ընդունում կամ հաստատում են սույն Արձանագրությունը կամ միանում են դրան քառասուններորդ վավերագիրը կամ այդպիսի գործողության մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այդպիսի պետության կամ կազմակերպության կողմից համապատասխան վավերագիրը կամ փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվից հետո երեսուններորդ օրը կամ սույն հոդվածի 1-ին կետի համապատասխան սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվին՝ կախված նրանից, թե որն է ավելի ուշ տեղի ունենում:

Հոդված 18

Ուղղումներ

1. Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հինգ տարին լրանալուց հետո սույն Արձանագրության Մասնակից պետությունը կարող է ուղղում առաջարկել և այն ուղարկել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այնուհետ առաջարկվող ուղղումն ուղարկում է Մասնակից պետություններին և Կոնվենցիայի Մասնակիցների խորհրդաժողովին՝ այդ առաջարկության քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով: Սույն Արձանագրության Մասնակից պետությունները, որոնք մասնակցում են Մասնակիցների խորհրդաժողովին, բոլոր ջանքերը գործադրում են յուրաքանչյուր ուղղման վերաբերյալ համաձայնության գալու համար: Եթե համաձայնության գալու համար բոլոր ջանքերը սպառվել են, և համաձայնություն ձեռք չի բերվել, ապա, որպես ծայրահեղ միջոց, ուղղումն ընդունելու համար պահանջվում է սույն Արձանագրության այն Մասնակից պետությունների ձայների երկու երրորդի մեծամասնությունը, որոնք Մասնակիցների խորհրդաժողովի նիստին ներկա են և մասնակցում են քվեարկությանը:

2. Տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպություններն իրենց իրավասության ոլորտում ընդգրկվող հարցերով ձայնի իրենց իրավունքը իրականացնում են սույն հոդվածի համաձայն՝ ունենալով ձայների այնքան քանակ, որը հավասար է իրենց անդամ պետությունների քանակին, որոնք սույն Արձանագրության Մասնակիցներ են համարվում: Այդպիսի կազմակերպությունները իրենց ձայնի իրավունքը չեն իրականացնում, եթե նրանց անդամ պետությունները իրականացնում են իրենց ձայնի իրավունքը և ընդհակառակը:

3. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ընդունված ուղղումը ենթակա է Մասնակից պետությունների կողմից վավերացման, ընդունման կամ հաստատման:

4. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ընդունված ուղղումը Մասնակից պետության նկատմամբ ուժի մեջ է մտնում նրա կողմից այդպիսի ուղղման վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու ամսաթվից հետո իննսուն օր անց:

5. Երբ ուղղումն ուժի մեջ է մտնում, այն պարտադիր է դառնում այն Մասնակից պետությունների համար, որոնք դրանով կապված լինելու համաձայնություն են արտահայտել: Մյուս Մասնակից պետությունները շարունակում են կապված լինել սույն Արձանագրության դրույթներով և նրանց կողմից նախկինում վավերացված, ընդունված կամ հաստատված ցանկացած ուղղումով:

Հոդված 19

Գործողությունը դադարեցնելը

1. Մասնակից պետությունը կարող է դադարեցնել սույն Արձանագրության գործողությունը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցագիր ուղարկելու միջոցով: Գործողության այդպիսի դադարեցումն ուժի մեջ է մտնում ծանուցագիրը Գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվից մեկ տարին լրանալուց հետո:

2. Տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպությունը դադարում է սույն Արձանագրության Մասնակից լինել, եթե նրա բոլոր անդամ պետությունները դադարեցրել են սույն Արձանագրության գործողությունը:

Հոդված 20

Ավանդապահը և լեզուները

1. Սույն Արձանագրության ավանդապահ է նշանակվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը:

2. Սույն Արձանագրության բնօրինակը, որի անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարապես նույնական են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչները, պատշաճորեն դրա համար լիազորված լինելով իրենց կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

***Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2003թ. դեկտեմբերի 25-ից:**